ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ--ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ
K86Mkrtchyan@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1995-2005ականներին արտաքին տնտեսական կապերի զարգացման եւ խորացման նպատակով ԻԻՀ արտաքին գործերի նախարարութիւնը մշակեց բազմակողմ տնտեսական համագործակցութիւն: Այդ նախաձեռնութեամբ իրանական կողմը ձգտում էր այդ կերպ ձեւաւորել տարբեր երկրների միջեւ միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական ուղղուածութեամբ հարթակ, որը կարող էր դառնալ կապող օղակ եւ գործուն համակարգ տնտեսական բազմաբնոյթ ոլորտներում: Նման համագործակցութեան ձեւաւորումը նպատակ ունէր խթանել հարեւան պետութիւնների միջեւ փոխգործակցութիւնը՝ խրախուսելով բարեկամական եւ բարիդրացիական յարաբերութիւնները տարածաշրջանում: Այն աշխարհագրօրէն իրար էր կապելու Սեւ Ծովի եւ Պարսից Ծոցի երկրները, իսկ հեռանկարում՝ Եւրոպան՝ Հարաւ-արեւմտեան Ասիային: Այդ նպատակով էլ 1990ականների կէսերին սկսուեց հանդիպումների եւ քննարկումների շարք:

Սոյն հետազօտութեամբ՝ արխիւային փաստաթղթերի, մամուլի եւ այլ հրապարակումների հիմամբ, ներկայացուում են ՀՀ-ԻԻՀ տնտեսական յարաբերութիւնների բազմակողմ գործակցութեան առանձնայատկութիւնները, լուսաբանուում այդ կապերի ռազմավարական նշանակութիւնը:

Յօդուածում հանգամանօրէն քննարկուում են նման նախաձեռնութեան պատճառները եւ ուղղութիւնները, այդ նախագծով հետաքրքրուած երկրների, դրա իրականացմանը խոչընդոտող կողմերի դիրքորոշումները, կատարած քայլերը: Միաժամանակ ներկայացուում են ՀՀ տնտեսական շահերը այս նախագծում:

Հետազօտութեան մէջ անդրադարձ է կատարուում նաեւ այս բազմակողմ համագործակցութեան լիարժէք չկայացման հարցին, ինչպէս նաեւ որպէս տնտեսական համագործակցութեան նորովի տարբերակ քննարկում է՝ որպէս արդիական միջազգային կառոյցի՝ ԵւրԱսիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) շրջանակներում համանման կապեր ստեղծելու գաղափարը, որն ունի կարելիութիւններ՝ դառնալու տնտեսական միաւորում ՀՀ-ԻԻՀ յարաբերութիւններում:

Հետազօտութեան արդիականութիւնը պայմանաւորուած է ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերի խորացման եւ զարգացման իրողութեամբ, ինչպէս նաեւ առկայ խնդիրներով, որոնք ՀՀի եւ ԻԻՀի համար ունեն տնտեսական եւ ռազմավարական նշանակութիւն:

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒՄԸ

1990ականների կէսերին Թեհրանում մշակուեց քաղաքականութիւն, որը կոչուեց տարածաշրջանային տնտեսական բազմակողմ համագործակցութիւն: Այն ենթադրում էր ԻԻՀի տնտեսական համագործակցութիւնը ոչ միայն հարեւան պետութիւնների, այլեւ դրանց միջոցով երրորդ երկրների հետ: Թեհրանը տարածաշրջանում տնտեսական նախաձեռնութիւններով հանդէս գալու համար կարեւոր պատճառներ ունէր.-

ա. Թուրքիայից տնտեսական կախուածութեան որոշակի նուազեցում.

բ. Ռուսաստանի Դաշնութեան միջամտութեամբ եւ նախաձեռնութեամբ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտում հաստատուած զինադադարի կնքումից յետոյ (1994 Մայիսի 12) ստեղծուած նոր իրադրութեան ընձեռած հնարաւորութեան օգտագործում.

գ. ԻԻՀ-Ադրբեջան յարաբերութիւններում առկայ խնդիրներին եւ նաւթային գործօնին հակակշիռների ստեղծում եւ ինչ որ տեղ Ադրբեջանի տնտեսական եւ փոխադրահամակարգի դերի նուազեցում:

Ինչպէս վերը նշուեց ԻԻՀ արտաքին գործերի նախարարութիւնն առաջ քաշեց տնտեսապէս շահեկան ծրագրեր հարեւան պետութիւնների համար: Սակայն Ադրբեջանը չէր ներառում այդ հաշուարկներում, քանզի Թեհրանի համար անսպասելի էր Բաքուի կատարած քայլը. 1994 Սեպտեմբերի 20ին Ադրբեջանի եւ միջազգային նաւթային ընկերութիւնների միջեւ կնքուած պայմանագրով վերջիններիս իրաւունք տրուեց զբաղուելու Կասպից Ծովի Ազերի, Չերաղ եւ Գիւնեշլի նաւթահանքերի արդիւնահանման աշխատանքներով[1]: Այդ պայմանագիրը ստորագրուել է աշխարհի ինը խոշոր դրամատների միաւորումների մասնակցութեամբ, որը ստացել է «Դարի Պայմանագիր» անուանումը[2]:

Վերոյիշեալ միաւորումը տնօրինում էր Պրիթիշ Փեթրոլիումը: Միաւորման բաժնետոմսերի 70%ը պատկանում էր ամերիկեան նաւթային ընկերութիւններին, իսկ ռուսական Lukoil եւ Ադրբեջանի ազգային նաւթային ընկերութեան փայերը կազմում էին համապատասխանաբար 10 եւ 20%: Բաքուի՝ ԻԻՀին յատկացուած 5%ի իրաւունքը կտրուկ առարկութեան հանդիպեց ԱՄՆի կողմից: Բաքուն յայտարարեց, որ չեղեալ է համարում ԻԻՀին յատկացուած 5% մասնաբաժնից նրա օգտուելու իրաւունքը:

ԻԻՀի ԱԳ նախարար Ալի Աքբար Վիլայաթին մեղադրեց Բաքուին՝ պայմանագրային պարտաւորութիւններին հաւատարիմ չմնալու համար: 1995 Ապրիլի 6ին ԻԻՀի կառավարութեան պաշտօնական տեսակէտներն արտայայտող *Էթթելաաթ* օրաթերթը Բաքուին մեղադրում էր ԻԻՀի հանդէպ պարտաւորութիւնների խախտման մէջ:

Վերոնշեալ պատճառներից զատ կարեւոր էր նաեւ այն որ Իրանը դեռեւս 1992 Մարտին Կասպից Ծովի աւազանի պետութիւններին առաջարկեց ստեղծել «Կասպեան Երկրների Բլոկ»՝ ազատ առեւտրի գօտու կարգավիճակով: Ստեղծուեց Կասպից Ծովի Աւազանի Պետութիւնների Հա-

մագործակցութեան Կազմակերպութիւնը: Իրանը հանդէս եկաւ գազ արտադրող եւ արտահանող երկրների միջազգային կազմակերպութեան ստեղծման առաջարկութեամբ (Ադրբեջան, Թուրքմէնստան, ՌԴ, Ուզբեկստան), սակայն նախաձեռնութիւնը յաջողութեամբ չպսակուեց[3]:

Ահա թէ ինչու 1994 Դեկտեմբերի 12ին ԻԻՀ տնտեսութեան նախարարութեան արտաքին տնտեսական կապերի վարչութեան պետ Մոհսէն Բիաբանին յայտնում է, որ իրանական կողմը պատրաստ է մասնակցելու Երեւան-Մեղրի աւտոճանապարհի վերակառուցման աշխատանքներին[4]: ԻԻՀի որեւէ պաշտօնատարի կողմից նման համաձայնութեան մասին լսում էր առաջին անգամ: Այդ ճանապարհի նշանակութեան մեծացումը կապուած էր ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Սեւ Ծով հաղորդակցութեան գիծը շահագործելու՝ Թեհրանի աճող հետաքրքրութեան հետ:

Բազմակողմ համագործակցութեան հարցերի քննարկման նպատակով Սոֆիայում ՀՀ դեսպանութեան քարտուղար Ռուբէն Կարապետեանը 1994ին հանդիպում է Բուլղարիայի ԱԳՆի ԻԻՀի պատասխանատու Անգել Օրբեցովի հետ: Զրոյցի ընթացքում Օրբեցովը յայտնում է, որ ԻԻՀն բեռների փոխադրման համար ինքնաշարժի եւ երկաթուղային ուղիներ է փնտռում՝ Թուրքիայից կախուածութիւնը վերացնելու նպատակով, քանի որ Թուրքիան բարձր մաքսատուրք է դրել իրանական ապրանքների վրայ: Բուլղարիան եւ Վրաստանը պայմանաւորուել էին բեռնափոխադրումները կատարել Փոթի-Բուրգաս ծովային ճանապարհով[5]: Իրանական կողմը պատրաստւում էր բանակցել վրացական կողմի հետ՝ այդ ճանապարհը մինչեւ Թեհրան հասցնելու նպատակով եւ մտադիր էր նոյն ճանապարհով արտահանել *նաւթ*:

Թեհրանը, զրկուելով ադրբեջանական նաւթի իր բաժնից չէր ցանկանում, որ նաւթամուղը անցնի Ադրբեջանի տարածքով եւ հակուած էր այն ՀՀով անցկացնելու տարբերակին: Տնտեսական առումով կարեւոր նշանակութիւն կ'ունենար ՀՀի տարածքով իրանական ե՛ւ նաւթամուղի, ե՛ւ գազամուղի անցկացումը: Այդ նպատակով հայ-իրանական կապերի յանձնաժողովը 1995 Յուլիսի 18ին քննարկում է ԻԻՀի ներգրաւմամբ երրորդ երկրների հետ կապերի համաձայնեցման ենթայանձնաժողովների ստեղծման հարցը[6]: ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի յանձնարարութեամբ յանձնաժողովը պէտք է համադրէր նաեւ եռակողմ համագործակցութեան ոլորտները, որը խիստ կարեւոր նշանակութիւն ունէր ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման տեսանկիւնից:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ԻԻՀ-ՅՈՒՆԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

1995 Յունուարին Աթէնքում տեղի ունեցաւ տնտեսական համագործակցութիւն ծրագրող ԻԻՀի, ՀՀի, Յունաստանի եւ Վրաստանի փորձագէտների առաջին հանդիպումը:

1995 Յունիսի 21ին Թեհրանում ՀՀ դեսպանութեան քարտուղար Գ. Մելքոնեանը հանդիպում է Յունաստանի դեսպանութեան քարտուղար Ն. Պլեքսիդասի հետ: Վերջինս յայտնում է, որ ՀՀ-ԻԻՀ-Յունաստան համագործակցութեան համար առկայ է քաղաքական ցանկութիւն[7]: Յունաստանը նաւթի 90%ից աւելին ներմուծում էր ԻԻՀից: 1996 Մարտին ձեւաւորուեց ՀՀ-ԻԻՀ-Յունաստան եռակողմ համագործակցութիւնը, որի շրջանակներում տեղի ունեցան մի շարք հանդիպումներ[8]: Այդ ընթացքում երեք երկրների առեւտրական կապերը զարգանում էին ապրանքափոխանակութեան միջոցով: Սկզբում նախատեսւում էր առեւտրաշրջանառութիւնը հասցնել 20-50 մլն. դոլարի[9]:

Ակնյայտ է, որ ԻԻՀն կենսականօրէն շահագրգռուած էր ՀՀն աւելի եռանդուն կերպով ընդգրկել իր տարածաշրջանային քաղաքականութեան շրջանակների մէջ, ընդ որում՝ ոչ միայն երկկողմ, այլեւ բազմակողմ յարաբերութիւնների հիմքի վրայ: Այդ մասին է վկայում 1996ին ձեւաւորուած ԻԻՀ-ՀՀ-Յունաստան համագործակցութիւնը[10]:

1996 Դեկտեմբերի 3-4ը Թեհրանում գումարւում է ԻԻՀ-ՀՀ-Յունաստան-Վրաստան քառակողմ հանդիպումը, որտեղ պատուիրակութիւնները ղեկավարում էին նշուած պետութիւնների ԱԳ փոխնախարարներ՝ Մահմուդ Վայէզին, Սերգէյ Մանասէրեանը, Կոստաս Գէորգիուն եւ Մալխազ Կակաբաձէն[11]: Վրաստանի միանալը հեռանկարային այս ծրագրին ընկալւում էր՝ որպէս նոր լիցքեր հաղորդող:

Ի շարունակութիւն նախորդ հանդիպման ընթացքում ձեռք բերուած պայմանաւորուածութեան՝ 1997 Դեկտեմբերի 22ին Աթէնքում ԱԳ նախարարները քննարկում են համագործակցութեան ուղիները[12]: Հետաքրքիր է, որ 1998 Յունիսի 3ին Երեւանում տեղի ունեցաւ փորձագէտների հանդիպում ուժանիւթի հարցերով: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին էլեկտրաուժանիւթի, Իրան-Հայաստան գազամուղի շինարարութեան, տուեալների շտեմարանի ստեղծման եւ տեղեկատուութեան փոխանակման բնագաւառում համագործակցութեան հարցերը[13]: Ուշադրութեան է արժանի այն փաստը, որ յունական կողմը պատրաստակամութիւն էր յայտնել ֆինանսաւորելու գազատարի շինութիւնը:

Այս ենթահողում կարեւոր է 1997ին ԻԻՀի նախագահ ընտրուած Մոհամմադ Խաթամիի՝ արտաքին քաղաքականութեան բնագաւառում նորարարական կողմնորոշումները. նա յայտարարեց, որ ինքը ձգտում է ընդլայնել Իրանի համագործակցութիւնը շրջապատող աշխարհի, այդ թւում նաեւ ազդեցութեան առաջատար համաշխարհային կենտրոնների՝ ԱՄՆի եւ ԵՄի հետ[14]:

Նրա այդ յայտարարութիւնը դրական արձագանգ գտաւ Եւրոպայում, մանաւանդ որ վերջինս, հանդիսանալով իրանական նաւթի հիմնական ներմուծողը (Իրանն ապահովում էր Եւրոպայի նաւթի պահանջների աւելի քան 10%ը), շօշափելի կերպով իր վրայ զգացել էր Իրանի հետ

յարաբերութիւնների խզման բացասական տնտեսական հետեւանքները[15]: Ահա թէ ինչու բազմակողմ համագործակցութեան Թեհրանի առաջարկը լաւ էր ընդունւում Արեւելեան Եւրոպայի երկրներում:

1998 Սեպտեմբերի 8ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը Թեհրանում մասնակցում է ԻԻՀ-ՀՀ-Յունաստան երկրորդ եռակողմ հանդիպմանը: Բանակցութիւնների թեման էր հեռահաղորդակցութիւնը՝ Եւրոպա-Սեւ Ծով-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ-Կենտրոնական Ասիա արդի *օպտիկամանրաթելային* լարերի անցկացումը: Յիշարժան է, որ *Iran News*ը ԻԻՀ-ՀՀ-Յունաստան համագործակցութիւնը շտապեց գնահատել որպէս ԱՄՆ-Իսրայէլ-Թուրքիա զարգացող դաշինքը չէզոքացնելու կոչուած եռանկիւնի[16]: Մինչդեռ IRNA լրատուական գործակալութիւնն աւելի զգուշաւոր էր. նա մէջբերեց կողմերի միջեւ ստորագրուած յուշագրից մի հատուած, թէ՝ եռակողմ համագործակցութիւնը լիովին համապատասխանում է հայ, յոյն եւ իրանցի ժողովուրդների շահերին եւ ուղղուած չէ որեւէ երկրի դէմ[17]:

2000 Յունիսի 7ին Երեւանում հանդիպեցին ՀՀ-ԻԻՀ-Յունաստանը ներկայացնող առեւտրի պատասխանատուները: ՀՀ առեւտրի նախարար Կարէն Ճշմարիտեանը յայտնեց, որ հակառակ այն իրողութեան, որ յիշեալ երկրներից իւրաքանչիւրը երկրորդի հետ գործակցութիւն է զարգացնում, դրանով հանդերձ եռակողմ զարգացումը նոյն թափով չի ընթանում[18]: Այս փաստն ընդունում էին երեք կողմերն էլ: Ասուածի վկայութիւնն էր այն, որ յունական պատուիրակութեան ղեկավար Վասիլիոս Կանելլակիսը հաստատեց, որ քաղաքական գործակցութիւնը շատ աւելի դիւրին է քան տնտեսականը, որովհետեւ գլխաւոր դժուարութիւնը կայանում է երեք կողմերի շահերը գոհացնող ծրագրերի յստակեցման մէջ:

Փաստօրէն ծրագրերի ճշգրտման կարիք էր զգացւում, որն էլ բարդացնում էր եռակողմ աշխատանքները:

2000 Յունիսի 8ին ՀՀ ԱԳ փոխնախարար Արմէն Մարտիրոսեանը հանդիպեց ՀՀ-ԻԻՀ-Յունաստան եռակողմ համագործակցութեան շրջանակներում Երեւանում գտնուող ԻԻՀ արդիւնաբերութեան փոխնախարար Բահադորանիին[19]: Վերջինս անդրադառնում է Իրան-ՀՀ գազատարի շինարարութեանը, որը միջազգային հնչեղութիւն էր ստացել: Այդ ծրագրին դէմ էր ԱՄՆը, բայց ՀՀ կառավարութիւնը ԵՄում յստակ արտայայտել էր ծրագիրն իրականցնելու իր մտադրութեան մասին՝ շեշտելով, որ այն բխում է ՀՀ տնտեսական շահերից:

ՀՀի, ԻԻՀի եւ Յունաստանի միջեւ գործակցութիւնը լուրջ հակազդեցութիւն, իսկ ինչ որ տեղ ապատեղեկատուական քարոզչութիւն ունեցաւ արեւմուտքում, որին արժէ անդրադառնալ: Ինչպէս երեւում է հրապարակումներից այդ մասին անդրադարձել է ժամանակի մամուլը: 1999 Յուլիսի սկզբին «Սնարք» գործակալութիւնը[20] գրում է. «*Պաշտօնական Աթէնքը եւ Թեհրանը արդէն հրապարակել են հայ-յունա-իրանական ռազմական պակտի ստորագրման օրը՝ 1999 Յուլիսի 12*»[21]: Աւելին ներկայացուած

«ՀՀ-Յունաստան-ԻԻՀ ռազմական պակտը» արեւմտեան վերլուծաբանները որակեցին որպէս «ՆԱՏՕի դէմ ուղղուած» եւ յատկապէս՝ Թուրքիայի, չնայած այն որ Յունաստանը Հիւսիս-Ատլանտեան Դաշինքի անդամ է: Այս յօրինուած տեսութեան հեղինակների համաձայն՝ ՀՀ-Յունաստան-ԻԻՀն ռազմական դաշինքի ծագումը լիովին համապատասխանում է ՌԴի շահերին, որը սերտ կապերով միացած է այդ երեք պետութիւնների հետ: Ուշագրաւ է, որ դաշինքը ներկայացւում էր որպէս ՎՈՒԱՄին[22] հակակշիռ, որը պէտք է մեկուսացնէր Վրաստանին եւ Ադրբեջանին ՆԱՏՕից:

Վերոնշեալին հետեւեց 1999 Յուլիսի 5ին ՀՀ ԱԳ նախարար Օսկանեանի կողմից այդ լուրի պաշտօնական հերքումը: Իրավիճակը մեղմուեց միայն այն բանից յետոյ, երբ ԱՄՆ պետական քարտուղարութեան ներկայացուցիչ Ջէյմս Ֆոլին յայտնեց, որ «*Իրանի եւ Հայաստանի հետ ռազմական պակտ ստորագրելու Յունաստանի մտադրութեան մասին հաղորդումները «սխալ» էին*»[23]: Տեղին է նշել, որ այս եւ նմանատիպ միջադէպերը քարոզչական դաշտում վնասում էին գործակցութեան յետագայ զարգացմանը:

Իրականում Արեւմուտքի կողմից բարձրացուած անհանգստութիւնը բացատրւում է այն փաստով, որ Իրանի ազդեցութեան մեծացումը տարածաշրջանում ընկալւում էր որպէս մրցակից Թուրքիային: Միւս կողմից, ի հեճուկս ՀՀ-ԻԻՀ-Յունաստան տնտեսական ձեւաչափի, փորձ էր արւում ստուերել Իսրայէլ-Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական գործակցութիւնը:

ԻԻՀի հետ յարաբերութիւններում ուժանիւթի, ընդհանուր տնտեսական ռազմական բնոյթի շահերից բացի, Արեւմուտքի երկրների համար էական նշանակութիւն ունէին երկրաքաղաքական եւ ռազմավարական շահերը: Գաղտնիք չէ, որ Իրանի աշխարհագրառազմական դիրքը այնպիսին է, որ նա հանդիսանում է մի տեսակ կամուրջ Արեւելքի եւ Արեւմուտքի, Հիւսիսի եւ Հարաւի միջեւ: Անժխտելի է իրանական գործօնի ազդեցութիւնը միջազգային յարաբերութիւնների համակարգի զարգացման վրայ[24]:

Վերոնշեալով հանդերձ 1999 Յուլիսի 12ին Աթէնքում կայացաւ եռակողմ գործակցութեան երկրորդ հանդիպումը, որը քննարկեց տնտեսական խնդիրները: ՀՀի, ԻԻՀի եւ Յունաստանի միջեւ ցամաքային եւ ծովային յուսալի անմիջական կապ ապահովող էր դիտարկւում Վրաստանը: Ինչ վերաբերում է վրաց-իրանական յարաբերութիւններին, ապա նշենք, որ դեռ 1993ին Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձէն այցելել էր ԻԻՀ, իսկ 1995ին ԻԻՀ նախագահ Հաշէմի Ռաֆսանջանին՝ Վրաստան[25]:

Ռաֆսանջանիի այցի ընթացքում ստորագրուել էին մի շարք համաձայնագրեր: Նա այցելել էր Սեւ Ծովի վրացական Փոթի նաւահանգիստ՝ ուսումնասիրելու նրա կարողութիւնները: ԻԻՀն ցանկանում էր այդ նաւահանգստի միջոցով իրանական բեռները փոխադրել Բուլղարիա: Մինչդեռ 1995 Յուլիսի 10ին ԻԻՀում Վրաստանի դեսպանութեան խորհրդական, քաղաքական հարցերով պատասխանատու Լեւան Ասատիանին ԻԻՀում

ՀՀ դեսպանութեան քարտուղար Ա. Դարբինեանի հետ հանդիպման ժամանակ ժամանակավրէպ էր համարում այդ մասին խօսելը, քանզի, ըստ նրա, Փոթին կորցրել էր աշխատանքային հզօրութիւնները եւ անհրաժեշտ էին շօշափելի ներդրումներ: Ասատիանիի հաւաստմամբ իրենք ՀՀի եւ Ադրբեջանի հաղորդակցութեան միջոցներից օգտուելու դէպքում նախապատուութիւնը ոչ մէկին չեն տալիս[26]: Իրականում ԻԻՀում Վրաստանի դեսպան Ջ. Գիունաշվիլին Ադրբեջանի տարածքով բեռների փոխադրման կողմնակից էր: Աւելին, Գիունաշվիլին եւ Վրաստանի փոխադրամիջոցների պատասխանատու-համակարգող Չխաիձէն Յուլիսի 10ին մեկնել էին Սոֆիա հենց այդ նպատակով: Թբիլիսին շահագրգռուած էր Թեհրանի բազմակողմ համագործակցութեան առաջարկով:

1995 Սեպտեմբերին Բուլղարիայի սեւծովեան ափի մեծութեամբ երկրորդ եւ բնակչութեամբ չորրորդ Բուրգաս քաղաքում նախատեսւում էր անցկացնել հանդիպում Բուլղարիայի, Վրաստանի եւ ԻԻՀի ներկայացուցիչների միջեւ: Իրանական կողմի պնդմամբ այդ հանդիպմանը պէտք է մասնակցէր նաեւ ՀՀ ներկայացուցիչը[27]: ԻԻՀն այդ տարիներին ՀՀի ամենաեռանդուն գործընկերներից մէկն էր՝ ՌԴից եւ Թուրքմէնստանից յետոյ:

Իրան-Եւրոպա տնտեսական ծրագրերում կարեւոր տեղ ունէր Ռումինիան: 1995 Յուլիսի 5ին Թեհրանում Ռումինիայի դեսպան Ք. Թէոդորեսկուն հանդիպում է ԻԻՀում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Վահան Բայբուրդեանին[28]: Նախատեսւում էր ստեղծել փոխադրամիջոցների ընկերութիւն, որը ցամաքային եւ ծովային ճանապարհով (Կոնստանցա քաղաքի վրայով), իրականացնէր Եւրոպա-Ասիա բեռների փոխադրումներ: Ռումինիան հակուած էր, որպէս տարանցիկ ուղի, օգտուել ՀՀի ճանապարհներից:

1995 Յուլիսին Սոֆիայում տեղի ունեցաւ ԻԻՀ-Վրաստան-Բուլղարիա եռակողմ հանդիպումը, որին ՀՀն չմասնակցեց: Փաստօրէն Թեհրանը ՀՀին տեսնում էր ԻԻՀ-ՀՀ-Յունաստան, իսկ Վրաստանին՝ ԻԻՀ-Վրաստան-Բուլղարիա եռակողմ ձեւաչափում:

1995 Հոկտեմբերի 16-18ը Բուրգաս քաղաքում ՀՀի, ԻԻՀի, Վրաստանի եւ Բուլղարիայի փորձագէտները քննարկում են փոխադրամիջոցների նոր կապի ստեղծման հարցը[29]: Վառնա-Բուրգաս-Փոթի, Բաթումի նաւահանգիստների երթուղիների բացումը հնարաւորութիւն կը տար ՀՀին առաքել եւ ներմուծել բեռներ եւրոպական երկրներից: Նախատեսւում էր Փոթիում կառուցել երկաթգծի վագոնները լաստանաւ մտցնելու յատուկ կառամատոյց, որը հնարաւորութիւն կը տար ՀՀից բարձուած վագոնները միանգամից հասցնել Բուլղարիա եւ շարունակել երկաթուղով դէպի եւրոպական երկրներ: Նախատեսւում էր նշուած փոխադրութեան միջանցքով տարեկան փոխադրել մինչեւ 10մլն. տ. բեռ:

ԻԻՀն հաշուի էր առնում ՀՀի տեսակէտը՝ բազմակողմ գործակցութիւնը համալրելու նոր պետութիւններով: 1995 Հոկտեմբերի 13ին ՀՀ ԱԳ

նախարար Վահան Փափազեանը եւ ԻԻՀի ԱԳՆի ԱՊՀ երկրների վարչութեան պետ Հոսէյն Նարաղեանը քննարկում են ՀՀ-Ղազախստան-ԻԻՀ, ՀՀ-Ֆրանսիա-ԻԻՀ հնարաւոր եռակողմ գործակցութեան հարցերը: ՀՀն իւրայատուկ կապեր ունէր ՌԴի եւ Ֆրանսիայի հետ եւ կարող էր օգտուել այդ հնարաւորութիւնից[30]: Իսկ Նոյեմբերի 28ին ՀՀ ԱԳ փոխնախարար Էդուարդ Զուլոյեանը եւ ԻԻՀի դեսպան Համիդ Ռեզա Էսֆահանին քննարկում են ՀՀ-ԻԻՀ-Հնդկաստան գործակցութեան հնարաւորութիւնները: Էսֆահանին առաջարկում է, որ Դելիի հետ գործակցութեան դրոյթները ներկայացնի հայկական կողմը[31]: Հայկական կողմի համար կարծես լուծում եւ բացում էին նոր տնտեսական հեռանկարներ, սակայն, նշուած ֆրանսիական եւ ղազախական ուղղութիւններով կարող ենք ասել, որ աշխատանքները քննարկումների մակարդակով էլ ըստ էութեան սահմանափակում էին:

Մինչդեռ ԻԻՀ-ՀՀ-Վրաստան եռակողմ գործակցութիւնը որոշակի յաջողութիւններ ունեցաւ թմրանիւթերի դէմ պայքարի ոլորտում, սակայն տնտեսական ոլորտում կրկին առաջընթաց չգրանցուեց: Գլխաւոր պատճառը քաղաքական էր: Թեհրանի աշխուժութիւնը՝ տարածաշրջանում, անհանգստացնում էր Բաքուին: 1997 Փետրուարի 4ին ԻԻՀում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Բայբուրդեանը հանդիպում է ԻԻՀում ՌԴ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերգէյ Տրետիակովին[32]: Դեսպանների զրոյցից պարզ է դառնում, որ Ադրբեջանի նախագահ Հէյդար Ալիեւը ճնշում է գործադրել Վրաստանի նախագահ Շեւարդնաձէի վրայ, որպէսզի Վրաստանը հրաժարուի ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Յունաստան քառակողմ գործակցութիւնից: Շեւարդնաձէն տեղի է տուել՝ խոստանալով կատարել Ադրբեջանի կամքը, որն այդ գործակցութիւնը մեկնաբանում էր որպէս Ադրբեջանի եւ Թուրքիայի դէմ ուղղուած քայլ: Ալիեւի ճնշումներին Շեւարդնաձէն տեղի տուեց եւ Վրաստանը չշարունակեց գործակցութիւնը:

ԻԻՀն ռազմավարական նպատակներ էր հետապնդում՝ կառուցելով ԻԻՀ-ՀՀ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը, որը շահագործման յանձնուեց 1997ին: Այդ գիծը շարունակուելու էր դէպի Վրաստան, որը, սակայն, տեղի չունեցաւ Թբիլիսիի մերժման պատճառով[33]: Քանի որ ԻԻՀ-ՀՀ-Վրաստան գործակցութիւնը չստացուեց, Թեհրանը առաջ քաշեց եռակողմ գործակցութիւնը Թուրքմէնստանի հետ:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ԻԻՀ-ԹՈՒՐՔՄԷՆՍՏԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ԻԻՀն շահագրգռուած էր ՀՀն ներառել իր տարածաշրջանային քաղաքականութեան մէջ բազմակողմ յարաբերութիւնների հիմքի վրայ: Իր հերթին ՀՀին ձեռնտու էր համագործակցել նման ձեւաչափով յատկապէս տնտեսական ոլորտում, որտեղ կային լուրջ նախադրեալներ:

Տասնամեակներ շարունակ ՀՀն եւ Թուրքմէնստանը, գտնուելով ԽՍՀՄ կազմում, միմեանց հետ գործակցութեան մեծ փորձ էին կուտակել:

ՀՀ-ԻԻՀ-Թուրքմէնստան եռակողմ գործակցութեան սկզբնաւորման համար կարեւոր հիմք էր առեւտրաշրջանառութեան տուեալները կողմերի միջեւ: Դեռ 1994ին արտաքին առեւտրի բնագաւառում ՀՀի գլխաւոր գործընկերներն էին՝ ԻԻՀն, որի հետ արտաքին առեւտրի շրջանառութիւնը 104 մլն. դոլար էր, որից՝ 20 մլն.ը արտահանում, 84 մլն.ը՝ ներմուծում, եւ Թուրքմէնստանը, որի հետ արտաքին առեւտրի շրջանառութիւնը 44 մլն. դոլար էր, որից 40 մլն.ը ներմուծում, 4 մլն.ը՝ արտահանում[34]:

1994 Դեկտեմբերի 12ին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատեանի հետ հանդիպմանը ՀՀում ԻԻՀի դեսպան Համիդ Ռեզա Էսֆահանին կարեւորում է ՀՀ փոխնախագահ Գագիկ Յարութիւնեանի՝ ԻԻՀ կատարած այցի արդիւնքները: ՀՀի պատուիրակութիւնը բանակցել էր Քիշ կղզում հայկական առեւտրի, զբօսաշրջութեան եւ արդիւնաբերութեան կենտրոններ ստեղծելու շուրջ: ՀՀ կառավարութիւնը մտադրուած էր աշխատանքային խումբ գործուղել ԻԻՀ՝ Քիշի մասին տեղեկատուութիւն ստանալու[35]: Թեհրանը պատրաստում էր վերագործարկել Իրան-Թուրքմէնստան երկաթուղին, եւ ՀՀն կարող էր օգտուել այդ ճանապարհից ԻԻՀի հետ երկաթուղային կապ ունենալու դէպքում: Այդ առիթով նա անդրադառնում է Նախիջեւանի տարածքով անցնող երկաթգծի բացման հնարաւորութեանը:

1995 Յունուարին երկու յանձնաժողովները քննարկել են գազատարի շինարարութեան, գազի գնի եւ շուրջօրեայ մատակարարման հարցեր: ԻԻՀի տարածքով Թուրքմէնստանից ՀՀ ուժանիթի տարանցիկ փոխադրման համար իրանական կողմը տուել էր իր համաձայնութիւնը:

1995 Փետրուարի 23ին Երեւանում ԻԻՀ դեսպանութիւնը յայտնում է, որ Մարտին ԻԻՀ նախագահի, Տնտեսական Համագործակցութեան Կազմակերպութեան անդամ երկրների նախագահների ներկայութեամբ տեղի է ունենալու Բանդար Աբբաս-Բաֆղ երկաթգծի բացման արարողութիւնը: ՀՀ նախագահը եւ ԱԳ նախարարը հրաւիրուում էին մասնակցելու յիշեալ արարողութեանը եւ այցելելու Պարսից Ծոցի Քիշ կղզի: ՀՀի համար կարեւոր էր Բանդար Աբբաս նաւահանգստի թողունակութեան մեծացումը: Այն բեռնափոխադրման հանգոյց է Ծոցի աւազանի եւ Հարաւարեւելեան Ասիայի երկրներից տարանցիկ բեռներ ՀՀ տեղափոխելու համար: Բանդար Աբբասի վրայով ՀՀն կապւում է նաեւ հնդկական՝ Բոմբէյ, Մադրաս, Կալկաթա նաւահանգիստների հետ:

1995 Մարտի 16ին նախագահ Տէր Պետրոսեանի գլխաւորած պատուիրակութիւնը, որի կազմում էին պետնախարար Վազգէն Սարգսեանը, ԱԳ նախարար Վահան Փափազեանը, մեկնեց Թեհրան, այնուհետեւ Քիշ կղզի եւ Բանդար Աբբաս[36]՝ Մարտի 17ին մասնակցելու Բանդար Աբբաս-Բաֆղ երկաթուղու բացման հանդիսութեանը[37]: Բացման առթիւ տեղի ու-

նեցած նիստում, որին մասնակցում էին մի շարք երկրների ղեկավարներ, ելոյթ ունեցան ԻԻՀ նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին եւ Թուրքմէնստանի նախագահ Սափարմուրատ Նիազովը, որոնք կարեւորեցին երկաթուղու նշանակութիւնը ԻԻՀի, նաեւ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Հարաւարեւելեան Ասիայի համար:

Առանձնակի նշանակութիւն ունեցաւ Ռաֆսանջանի-Նիազով-Տէր Պետրոսեան եռակողմ հանդիպումը, որի ընթացքում քննարկուեցին ԻԻՀ-ՀՀ-Թուրքմէնստան առեւտրատնտեսական գործակցութեան խնդիրներ, տարանցիկ առեւտրի կարգաւորման եւ զարգացման, երեք երկրների միջեւ համատեղ փոխադրութեան ընկերութիւն ստեղծելու հարցեր: Այսպէս, պաշտօնապէս ձեւաւորուեց ՀՀ-ԻԻՀ-Թուրքմէնստան եռակողմ գործակցութիւնը[38], որը յետագայում ամրագրուեց ընդունուած փաստաթղթերում: Նոյն օրը երեկոյեան Տէր Պետրոսեանը եւ Ռաֆսանջանին Քիշ կղզում քննարկեցին տարածաշրջանային քաղաքականութեանը վերաբերող հարցեր: Նախագահների մակարդակով եռակողմ բանակցութիւններին փոխարինեցին ԱԳ նախարարների հանդիպումները[39]:

1995 Յունիսի 1ին Երեւանում տեղի ունեցաւ ԱԳ նախարարների տեղակալների եռակողմ հանդիպում, որին մասնակցում էին Թուրքմէնստանի փոխադրամիջոցների նախարար Սենակուլի Ռաֆմանովը եւ առեւտրի նախարարի տեղակալ Բերդիմուրադ Ռեջէպովը[40]: ՀՀ փոխնախագահի Յարութիւնեանի խօսքով՝ եռակողմ յարաբերութիւններն ունէին ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական նշանակութիւն եւ կարող էին դառնալ տարածաշրջանային կայունութեան ամրապնդման գործօն:

1996 Յունուարի 21ին Թեհրանում եռակողմ գործակցութեան շուրջ ընդունուեց համատեղ յայտարարութիւն[41]: Բանակցութիւններ վարելու եւ ամփոփիչ փաստաթղթեր պատրաստելու համար չորս ուղղութիւններով ստեղծուեցին աշխատանքային խմբեր՝ փոխադրութիւն, առեւտուր, տնտեսութիւն՝ բանկային գործ եւ ուժանիւթ: Կողմերը համաձայնւում են ստեղծել համատեղ փոխադրութեան ընկերութիւններ՝ բացելով կենտրոնական գրասենեակներ Երեւանում, Թեհրանում: Աշխաբադում պէտք է հիմնուէր յիշեալ գործունէութիւնը համադրող կենտրոնատեղի: Հայկական կողմը ստեղծելու էր անհրաժեշտ պայմաններ Երեւան-Նախիջեւան-Ջուլֆա երթուղիով գնացքների երթեւեկութեան համար: Նման առաջարկութեամբ հայկական կողմը հանդէս էր գալիս դեռ 1992ից, բայց Ադրբեջանը չէր ընդունում: Կողմերը համաձայնւում են օգտագործել իւրաքանչիւր երկրի հնարաւորութիւնները:

1996 Մարտի 5ին ԻԻՀ ԱԳ նախարար Վելայաթին ՀՀ նախագահին է յանձնում ԻԻՀ-Թուրքմէնստան երկաթուղու[42] բացման արարողութեանը մասնակցելու՝ ԻԻՀի եւ Թուրքմէնստանի նախագահների համատեղ հրաւէրը: Մայիսի 12ին երկաթուղու բացման արարողութեանը մասնակցեցին 60 երկրներից ժամանած պատուիրակութիւններ: Այցի ընթացքում ՀՀ

նախագահը երկու անգամ հանդիպում ունեցաւ ԻԻՀի եւ Թուրքմէնստանի նախագահների հետ. ամրապնդուեց ԻԻՀ-ՀՀ-Թուրքմէնստան եռակողմ գործակցութիւնը: Յուլիսի 4ին Աշխաբադում ԱԳ նախարարներ Փափազեանը, Վելայաթին եւ Բորիս Շէյխմուրադովը ստորագրեցին ՀՀի, ԻԻՀի եւ Թուրքմէնստանի միջեւ ապրանքափոխանակութեան եւ տնտեսական գործակցութեան համաձայնագիր[43]: Ըստ համաձայնագրի՝ ՀՀն 20 մլն. դոլար արժողութեամբ բնական գազ պէտք է ներմուծէր Թուրքմէնստանից՝ ռետին եւ էլեկտրական լամպեր տալով ԻԻՀին, իսկ ԻԻՀն՝ համարժէք ապրանք եւ ծառայութիւններ պէտք է տրամադրէր Թուրքմէնստանին: Սա թերեւս յաջողուած գործարք էր:

1996 Դեկտեմբերի 25-29ը պաշտօնական այցով Երեւանում էր գտնուում ԻԻՀ առաջին փոխնախագահ Հասան Հաբիբին[44]: Դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից (1992 Փետրուար 9) յետոյ սա իրանական ամենաբարձր մակարդակի պատուիրակութիւնն էր, որ ժամանում էր Երեւան: ՀՀ նախագահի հետ հանդիպելով՝ Հաբիբին կարեւորեց ՀՀի մասնակցութեամբ բազմակողմ գործակցութեան կառուցակարգերի ամրապնդումը: Հաբիբին ընդգծեց, որ Իրանը լրջօրէն մտադիր է բարիդրացիական յարաբերութիւններ հաստատել Անդրկովկասի բոլոր պետութիւնների, մասնաւորապէս, Հայաստանի հետ: Կողմերը պատրաստակամութիւն են յայտնում ջանքեր գործադրել եռակողմ գործակցութեան շրջանակներում ապրանքաշրջանառութիւնը հասցնել 20 մլն. դոլարի[45]:

1997 Յունուարին Թեհրանում տեղի է ունենում ԻԻՀ-ՀՀ-Թուրքմէնստան եռակողմ 5րդ հանդիպումը, իսկ Ապրիլի 16ին Երեւանում՝ 6րդը: Արդէն 1997 Մարտի 17ին Երեւանում ԱԳ փոխնախարարները տեսակէտներ փոխանակեցին գործնական փուլի մէջ գտնուող ծրագրերի իրականացման խոչընդոտները վերացնելու հնարաւորութիւնների մասին: Գլխաւոր խոչընդոտը, թերեւս, ՌԴին անտեսելն էր եւ ուժանիւթի ծրագրերում չներառելը: Չնայած խոչընդոտներին՝ բանակցութիւնները շարունակւում էին: Ուշագրաւ է, որ 6րդ եռակողմ հանդիպման ընթացքում ՀՀ նախագահի հետ տեղի ունեցած հանդիպմանը մասնակցում են Շէյխմուրադովը եւ Վելայաթին, իսկ դիտորդի կարգավիճակով ՀՀում ՌԴ արտակարգ եւ լիազօր դեսպան Անդրէյ Ուռնովը: Բանակցութիւնների աւարտին ստորագրուեց հերթական յուշագիր, որը, ինչպէս նախորդները, չդարձաւ համատեղ գործողութիւնների ծրագիր եւ մնաց թղթի վրայ:

Այսպիսով, եռակողմ համագործակցութիւնը՝ երեք նախագահների անմիջական համաձայնութեամբ, ինքնին դրական երեւոյթ էր: Շրջափակման մէջ գտնուող ՀՀին ընձեռուեց հնարաւորութիւն ԻԻՀի տարածքով կապ հաստատել եւ գործակցել Կենտրոնական Ասիայի հետ: Թէեւ մեծ ծաւալներ չունեցաւ գործակցութեան այս ձեւաչափը, այնուամենայնիւ, ինչպէս անցեալում, այնպէս էլ ներկայում այս ուղղութեամբ առկայ է աւելի շատ չօգտագործուած մեծ ներուժ, քան մինչ այժմ օգտագործուել է:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ԻԻՀ-ՌԴ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

Եռակողմ գործակցութեան շրջանակներում իրատեսական էր ՌԴ-ԻԻՀ-ՀՀ գործակցութիւնը: ՀՀ-ՌԴ ռազմաքաղաքական դաշինքը պաշտօնական ձեւակերպում ստացաւ Մոսկուայում 1997 Օգոստոսի 29ին Բորիս Ելցինի եւ Տէր Պետրոսեանի միջեւ կնքուած «Մեծ Պայմանագրով»[46] եւ 2000ին Վլադիմիր Պուտինի եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ կնքուած «Նոր Պայմանագրով»: Ռուս-հայկական երկկողմ յարաբերութիւնները նոր որակ ստացան ՀՀ նախագահ Քոչարեանի Մոսկուա առաջին պաշտօնական այցից յետոյ, որն իրականացուեց 2000 Սեպտեմբերի 25-28ը: Այցի կարեւորագոյն արդիւնքը «XXI Դարում ՌԴ եւ ՀՀ Ռազմավարական Փոխգործակցութեան Մասին Հռչակագիր»ն էր, որը ռուս-հայկական յարաբերութիւններում նոր փուլ նշանաւորեց[47]:

ԻԻՀն դրական արձագանգեց ՀՀ-ՌԴ դաշինքին, որն իր ներկայութիւնն էր ապահովում ՀՀ-ԻԻՀ սահմանում: Պաշտօնական Թեհրանում լաւ էր ընդունուել ՀՀի եւ ՌԴի միջեւ ստորագրուած «Բարեկամութեան, Համագործակցութեան եւ Փոխօգնութեան» վերաբերեալ պայմանագիրը[48]: Աւելին՝ 2004ին ՀՀում ԻԻՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլէյնիի խօսքով՝ «*Իրանը սահմանի վրայ գտնուող ՀՀի եւ ՌԴի զօրքերին* «օտար զօրք» չի համարում»[49]: Իրանում քաղաքական շրջանակներն այն կարծիքին են, որ «Իրան-Թուրան» հակամարտութեան ընթացքում ՀՀին պէտք է դիտել որպէս յուսալի դաշնակից:

Միւս կողմից Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ ռազմաքաղաքական գործակցութեան նոր փուլ սկսուեց 1999 Ապրիլին Ադրբեջանի նախագահ Ալիեւի՝ Անկարա կատարած այցից յետոյ, որի ընթացքում Թուրքիան եւ Ադրբեջանը ստորագրեցին ռազմավարական համագործակցութեան պայմանագիր: Դրանով Թուրքիան երաշխաւորում էր Ադրբեջանի անվտանգութիւնը ցանկացած ոտնձգութեան դէպքում եւ պատրաստ էր ռազմաքաղաքական աջակցութիւն ցոյց տալ վերջինիս[50]:

ՀՀն յայտնուեց ՌԴ-ԻԻՀ ռազմաքաղաքական առանցքում, որը թէեւ պաշտօնապէս փաստաթղթերում ձեւակերպուած չէր, բայց ԻԻՀին, ՌԴին եւ ՀՀին դարձնում էր բնական դաշնակիցներ: Թեհրանն այս իրողութիւնը լաւագոյնս գիտակցում էր: Սակայն ՌԴ-ԻԻՀ գործակցութեանը ընդդիմանում էին քաղաքական տարբեր ուժեր, այդ թւում նաեւ ՌԴի կազմում գտնուող որոշ իսլամական պետական կազմաւորումներ:

1996 Նոյեմբերի վերջին ՌԴի Թաթարստանի Ինքնավար Հանրապետութեան[51] նախագահ Մինտիմէր Շայմիեւը[52] այցելեց Թեհրան՝ ԻԻՀ առեւտրի նախարարութեան հրաւէրով: Ռաֆսանջանիի հետ զրոյցի ժամանակ Շայմիեւն առաջարկել էր շրջանցել ՌԴին եւ ստեղծել Թաթարստան-Ադրբեջան-ԻԻՀ եռակողմ գործակցութիւն: Սակայն ԻԻՀն մերժում է այն՝ ելնելով ՌԴի հետ իր կայուն յարաբերութիւնների կարեւորութիւնից, փո-

խարէնը Թաթարստանին առաջարկելով գործակցութիւն ԻԻՀ որեւէ նահանգի հետ, ինչը չէր գոհացրել Շայմիեւին[53]: Իրականում Շայմիեւի այցի նպատակներից էր չեզոքացնել ՌԴ-ԻԻՀ-ՀՀ եռակողմ գործակցութիւնը: Նրա «առաջարկը» Ալիեւի մտայղացումն էր, որը ձգտում էր խոչընդոտել ՌԴ-ԻԻՀ-ՀՀ գործակցութիւնը եւ իրականացնել Բաքուին ձեռնտու գործակցութիւն: Թեհրանը լաւ էր հասկանում ալիեւեան դիւանագիտութեան նպատակը եւ զերծ մնաց նրան առիթ եւ ընթացք տալուց:

Միւս կողմից Թեհրանի եւ Մոսկուայի միջեւ գործակցութեան մասին է վկայում այն, որ 1990ականների երկրորդ կէսին ի տարբերութիւն բազմաթիւ իսլամական երկրների ԻԻՀն չդատապարտեց ՌԴի քաղաքականութիւնը Չեչնիայում՝ որպէս քրիստոնէութեան եւ իսլամի բախում:

ՌԴ-ԻԻՀ-ՀՀ գործակցութիւնը անհանգստութիւն էր պատճառում ադրբեջանական կողմին: Բաքուի «Ազադինֆորմ» գործակալութիւնը այդ նպատակով ներկայացնում է "Frontera Resources" (ԱՄՆ) ուժանիթի ընկերակցութեան փոխնախագահ Ռոբերտ Բերլսին, որը պաշտպանում էր ադրբեջանական տեսակէտը: Բերլսին հայկական լոբիի՝ ԱՄՆում գործունէութեանը վերաբերող իր ելոյթում, անդրադառնալով տարածաշրջանային յարաբերութիւններին, նշում է, որ ՀՀն աստիճանաբար կախուածութեան մէջ է ընկնում ՌԴից եւ ԻԻՀից[54]: Ըստ Բերլսի՝ ՌԴ կողմից ՀՀին կործանիչների եւ հրթիռակայանքների մատակարարումը մտահոգիչ էր, իսկ Վրաստանի եւ Ադրբեջանի անհանգստութիւնը՝ բնական: Միւս կողմից նշելի է, որ Վրաստանը եւ Ադրբեջանը, դուրս էին եկել ԱՊՀ կազմից: Իրականում Բերլսի շուրթերով խօսում էր պաշտօնական Բաքուն, որը այս դէպքում քօղարկուած էր ընկերակցութեան փոխնախագահի անուան տակ:

Փաստօրէն, Ադրբեջանի նախագահ Ալիեւը գործադրում էր ամէն տեսակ միջոցներ՝ խափանելու ՌԴ-ԻԻՀ-ՀՀ գործակցութիւնը, որը բխում էր այդ երեք երկրների ազգային շահերից: Անհրաժեշտ է փաստել, որ այդ ուղղութեամբ Ալիեւը չկարողացաւ ազդել եռակողմ գործընթացին, քանի որ երեք կողմն էլ հաստատակամ էին իրենց քայլերում եւ ծրագրերում:

ՌԴ-ԻԻՀ-ՀՀ գործակցութիւնը եւս մտահոգում էր արեւմտեան մամուլին: Այսպէս, 1998 Մարտ ամսին *The Washington Post*ը գրում է, որ ի հակակշիռ Ադրբեջան-Թուրքիա-Իսրայէլ դաշինքի, ՌԴն, Իրանը եւ նրանց կրտսեր գործընկեր ՀՀն կազմել են դաշինք, որը ծրագրուած է Ամերիկային հեռու պահել Կովկասից[55]: Այնուհետեւ թերթը յաւելում է, որ Իրանի իսլամական վարչակարգը ամուր կապեր է հաստատել Ադրբեջանի թշնամու՝ Հայաստանի հետ: Ընդգծում էր, որ ՌԴն եւ ԻԻՀն Կովկասում չեն ուզում տեսնել նաեւ Թուրքիայի յարաճուն ազդեցութիւնը:

Քանի դեռ Իրանը գտնւում է մեկուսացման մէջ՝ համընկնում են նրա եւ Ռուսաստանի տեսակէտները տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան վերաբերեալ: Ռուսաստանը եւս ձգտում է խոչընդոտել ԱՄՆի եւ Եւրամիութեան ծաւալումը Կենտրոնական Ասիայում եւ

Անդրկովկասում: Ռուսաստանի թուլացումը կարող է տարածաշրջան բերել այլ երկրների ստեղծելով անկայուն իրավիճակ, որը կը վտանգի Իրանի ազգային անվտանգութիւնը[56]:

Այսպիսով, տարածաշրջանում ձեւաւորուած աշխարհաքաղաքական իրավիճակը պայմանաւորում է ռուս-հայ-իրանական ամուր եւ տեւական դաշնակցային յարաբերութիւններ:

ԵԱՏՄ ՁԵՒԱՉԱՓԸ ՈՐՊԷՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱՋՄԱԿՈՂՄ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՏԱՐԲԵՐԱԿ

1995-2005 տասնամեակում շրջանառութեան մէջ դրուած եւ որոշ բնագաւառներում յաջողութիւններ գրանցած բազմակողմ տնտեսական գործակցութիւնը կայացաւ իրաւապայմանագրային դաշտում: Սակայն քաղաքական եւ ֆինանսական, առարկայական եւ ենթակայական պատճառներով պայմանաւորուած այն կեանքի կոչեց սահմանափակ ծրագրեր: Այսօր միջազգային եւ տարածաշրջանային յարաբերութիւններում մեծ է ԵԱՏՄ կառոյցի դերը, որի ընձեռած հնարաւորութիւններն անհրաժեշտ է օգտագործել ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերի զարգացման ուղղութեամբ:

ԵԱՏՄն տարածաշրջանային տնտեսական համարկման միջազգային կազմակերպութիւն է՝ օժտուած միջազգային իրաւունքի տարրերով եւ համապատասխան պայմանագրով[57], որը ստորագրուել է 2014 Մայիսի 29ին Աստանայում:

ԵԱՏՄում[58] ապահովւում է ապրանքների, ծառայութիւնների, դրամագլխի եւ աշխատուժի ազատ տեղաշարժը, ինչպէս նաեւ համակարգուած, համաձայնեցուած կամ միասնական քաղաքականութեան վարումը տնտեսութեան բնագաւառում:

ԵԱՏՄը ստեղծուել է ազգային տնտեսութիւնների բազմակողմանի արդիականացման, գործակցութեան, մրցունակութեան բարձրացման եւ անդամ պետութիւնների բնակչութեան կենսունակութեան բարձրացման համար կայուն պայմաններ ստեղծելու նպատակով:

Այս տարածաշրջանային տնտեսական կառոյցի շրջանակներում վերջին տարիներին հայկական եւ իրանական կողմերը ջանքեր են գործադրում երկկողմ տնտեսական գործակցութեան մէջ նոր յաջողութիւններ արձանագրելու ուղղութեամբ, ինչպիսիք են՝ Հայաստան մտնող իրանական գազի ծաւալների մեծացում, հիւսիս-հարաւ (Իրան, Հայաստան, Վրաստան, Ռուսաստան) ուժանիւթի համակարգերի միաւորում, ՀՀում հողմային էլեկտրակայանների կառուցում (50 մեգավատ ընդհանուր հզօրութեամբ), ազատ տնտեսական գօտիների ոլորտում գործակցութեան հաստատում, ՀՀ տարածքով Պարսից Ծոց-Սեւ Ծով փոխադրային ուղու կայացում եւ այլ ենթակառոյցների զարգացում:

Հեռանկարային եւ ընթացիկ ծրագրերից[59] կարելի է համարել.-

- Թուրքմէնստան-Իրան-Հայաստան գազի փոխանակում, որը յայտնի է SWAP[60] անունով: Այն քննարկումների փուլում է.
- Իրանական գազի տարանցում Վրաստան: Այս ուղղութեամբ արդիւնքներ չկան.
- Իրան-ՀՀ-Վրաստան-ՌԴ էլեկտրաուժանիւթի քառակողմ գործակցութիւն: 2015ին ստորագրուել է յուշագիր.
- ԵԱՏՄ-Իրան գործակցութիւն: 2018 Մայիսին ստորագրուել է Ազատ տնտեսական գօտի ստեղծելու մասին ժամանակաւոր համաձայնագիր ԵԱՏՄ անդամ երկրների եւ Իրանի միջեւ, այն վաւերացուել է.
- «Պարսից Ծոց-Սեւ Ծով ճանապարհային միջանցք»: Այն քննարկումների փուլում է.
- ՀՀ եւ ԻԻՀ տարածքով ցամաքային եւ ծովային[61] տարանցիկ փոխադրումների աշխուժացում: Այն քննարկումների փուլում է:

ԵԱՏՄ եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի գօտու ձեւաւորմանը միտուած ժամանակաւոր համաձայնագիր: Ստորագրուել է 2018 Մայիսի 17ին Աստանայի տնտեսական համաժողովի շրջանակներում[62]: Համաձայնագրի ստորագրման արարողութեանը յաջորդել է «ԵԱՏՄ-Իրան՝ Համագործակցութեան Նոր Հեռանկարները Արտօնուած Առեւտրի Պայմաններում» քննարկումը, որի մասնակիցները քննարկել են համաձայնագրի կնքումից սպասուող արդիւնքները, նոր հնարաւորութիւնները՝ ԵԱՏՄից եւ Իրանից արտահանողների համար, ինչպէս նաեւ կողմերի միջեւ գործակցութեան խորացման ուղիները[63]:

Բացելով քննարկումը՝ ԵՏՀ նախագահ Տիգրան Սարգսեանը նշել է, որ փաստաթուղթը իւրայատուկ է դարձել ԵԱՏՄի համար, քանի որ ենթադրում է ազատ առեւտրի գօտու (ԱԱԳ) ստեղծման երկու փուլ: Ընթացիկ փուլում գործելու է ժամանակաւոր Համաձայնագիրը: Երեք տարում նախատեսւում է պայմանաւորուել ԵԱՏՄի եւ Իրանի միջեւ ԱԱԳի մասին լիաձեւաչափ համաձայնագրի վերաբերեալ: ԱԱԳ մասին համաձայնագիրն ընդգրկելու է ամբողջ ապրանքային անուանացանկը: Հեռանկարում ապրանքաշրջանառութիւնը կարող է աւելանալ մինչեւ 150%:

Փաստօրէն երեք տարում, այսինքն՝ մինչեւ 2021ի կէսերը լիաձեւաչափ համաձայնագրի կնքումը, անհրաժեշտ է պաշտօնական Երեւանին գործի դնել բոլոր հնարաւոր միջոցները ՀՀ ազգային շահերը՝ նշուած փաստաթղթում ներառելու եւ ապագայում բազմակողմ այս գործակցութեան մէջ հայկական գործօնի դերը մեծացնելու նպատակով: Այն կարող է աշխուժացնել ՀՀ տնտեսական կեանքը՝ դարձնելով երկիրը տարանցիկ գօտի ԵԱՏՄ անդամ պետութիւնների եւ ԻԻՀ համար:

Ինչ վերաբերում է վրացական կողմի հետ հնարաւոր գործակցութեան հարցին, ապա այդ ուղղութեամբ միայն համատեղ եւ շահագրգիռ կողմերի բանակցութեամբ հնարաւոր է հասնել որոշակի արդիւնքի:

Վրաստանը իր, որպէս տարանցիկ երկրի, շահաբաժինը ստանալով՝ կարող է գործակցել այդ ձեւաչափով, քանի որ հեռանկարում հենց իր շահերից է բխում նաեւ Ադրբեջանից եւ Թուրքիայից տնտեսական կախուածութեան որոշակի նուազեցումը: Աւելին, Իրան-ԵԱՏՄ ձեւաչափը Թբիլիսիի համար կը դառնայ լուրջ հակակշիռ թուրքականին:

Վերոնշեալ ժամանակաւոր համաձայնագրում ներառուել է ապրանքների առաջնային ցանկը, որոնց նկատմամբ փոխադարձ առեւտրում ներմուծման մաքսատուրքերը կը նուազեցուեն կամ կը վերացուեն փաստաթղթի ուժի մէջ մտնելուց յետոյ: Համաձայնագիրն ընդգրկում է փոխադարձ առեւտրի ծաւալի 50%ը, որը վկայում է պայմանաւորուածութիւնների լրջութեան մասին:

Կարեւոր է նշել, որ վերոնշեալ բանակցային գործընթացին մասնակցել են ԵԱՏՄ հինգ երկրների ներկայացուցիչները եւ գործարար համայնքը՝ ԵՏՀ առեւտրի հարցերով նախարար Վերոնիկա Նիկիշինայի ղեկավարութեամբ: Միւս կողմից կատարուած աշխատանքի արդիւնքը բաւարարել է համաձայնագրի բոլոր կողմերին եւ իրանցի գործընկերներին: Փաստօրէն առկայ է փոխադարձ համաձայնութիւն գործընկեր պետութիւնների միջեւ:

ԵԱՏՄ երկրների եւ ԻԻՀի ձեռնարկատէրերը պայմանագրի ուժի մէջ մտնելուց յետոյ ստանալու են առաւելութիւններ, որոնցից է ներմուծման մաքսատուրքերի վճարման ընթացքում տնտեսելը:

Երկրորդ առաւելութիւնը փոխադարձ առեւտրի թափանցիկ եւ կանխատեսելի միջավայրն է: Ներմուծման մաքսատուրքերն իջեցնելուց բացի, Ժամանակաւոր Համաձայնագիրը նախատեսում է, որ կողմերը հետեւելու են միջազգային առեւտրի սկզբունքներին: Ամրագրուել է Առեւտրի Համաշխարհային Կազմակերպութեան (ԱՀԿ), չափականոններին նոյնական յատակագիծ, որը պարտաւորութիւններ եւ պահանջներ է դնում ԻԻՀի վրայ, չնայած որ վերջինս ԱՀԿին չի անդամակցում: Այս առաւելութիւնը գնահատում են Թեհրանում եւ այդ փաստով է պայմանաւորուած իրանական կողմի ճկուն եւ արագ բանակցութիւնների վարումը ԵԱՏՄ կառոյցի հետ:

Ասուածը լիարժէք պատկերացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ բարձրաստիճան պաշտօնեաների կողմից հնչեցուած թուային տուեալներին, որոնք վերաբերում են ԵԱՏՄ միւս անդամների եւ ԻԻՀի ապրանքաշրջանառութեանը: Այսպէս, Ղազախստանի Հանրապետութեան վարչապետի առաջին տեղակալ Սակար Մամինն ընդգծել է, որ 2018ի առաջին եռամսեակում Ղազախստանի եւ ԻԻՀի միջեւ ապրանքաշրջանառութեան աճն աւելացել է 72%՝ նախքան համաձայնագրի ուժի մէջ մտնելը:

ՀՀ փոխվարչապետ Տիգրան Աւինեանը ընդգծել է ԻԻՀի հետ պատմականօրէն ստեղծուած բարիդրացիական յարաբերութիւնները.

«Հայաստանը ԵԱՏՄ միակ երկիրն է, որն ունի Իրանի հետ ցամաքային սահման, եւ մենք կը փորձենք դա օգտագործել ի շահ Հայաստանի, ԵԱՏՄի եւ Իրանի շուկաներին»՝ ասել է նա:

Իրանի հետ առեւտրի ներգրաւուելու հնարաւորութիւն ունի «Մեղրի» Ազատ Տնտեսական Գօտին: Դա հնարաւորութիւն է ընձեռում իր հարթակում համատեղ արտադրութեան ստեղծման համար: Արտադրողներն ԻԻՀից կարող են ազատ տնտեսական գօտի ներմուծել հումք եւ ստանալ պատրաստի արտադրանք առանց ԵԱՏՄ շուկայ մատակարարման համար բիւրօկրատական ընթացակարգերի:

ԻԻՀի հետ գործակցութեան հայկական փորձը խոստմնալից է. Հայաստանն արտադրում է սննդամթերք իրանական *«հալալ»* ապրանքանիշին համապատասխան եւ արտահանում ԻԻՀ: Նոյն կերպ կարելի է արտադրել նաեւ այլ ապրանքներ եւ արտահանել:

Բելառուսի Հանրապետութեան վարչապետի Ա. տեղակալ Վասիլի Մատիւշեւսկին նշել է համաձայնագրի կարեւորութիւնը հանրապետութեան արտահանման ռազմավարութեան իրագործման համար: 2017ին Բելառուսի եւ ԻԻՀի միջեւ ապրանքաշրջանառութիւնն աւելացել է երեք անգամ: Ուշագրաւ է, որ աւանդական առեւտրատնտեսական գործակցութիւնից բացի, զարգանում է նաեւ ներդրումայինը: Բելառուսը ներդրումներ է իրականացնում Իրանի մեքենաշինութեան բնագաւառում: Իրանը Բելառուսում իրականացնում է մի շարք խոշոր բեռնափոխադրումների նախագծեր:

Ըստ էութեան միայն ԻԻՀի եւ Ղրղզստանի Հանրապետութեան միջեւ առեւտրաշրջանառութիւնն է, որ փոքր է: Ղրղզստանի փոխվարչապետ Զամիրբէկ Ասկարովը շեշտը դրել է առաւելութիւնների վրայ, որոնք ստանալու է հանրապետութիւնը Ժամանակաւոր Համաձայնագրի ուժի մէջ մտնելուց յետոյ:

ՌԴ կառավարութեան նախագահի տեղակալ Դմիտրի Կոզակը համաձայնագրի ստորագրման առթիւ նշել է, որ գործարար հատուածը դրա հիմնական շահառուն է: Փաստաթղթում նախատեսուել է յատուկ յօդուած գործարար-երկխօսութեան հաստատման մասին:

Իվերջոյ, ԻԻՀի արդիւնաբերութեան, հանքերի եւ առեւտրի նախարար Մոհամմադ Շարիաթմադարին նշել է ԵԱՏՄի եւ ԻԻՀի՝ որպէս համաշխարհային տնտեսութեան անդամների մեծ ներուժը: Ըստ նրա՝ ԻԻՀն խնդիր է դնում պարզեցնել արտահանման ընթացակարգերը, վերացնել արգելքները, զարգացնել բեռնափոխադրումների համակարգը եւ կայուն առեւտրատնտեսական յարաբերութիւններ հաստատել ԵԱՏՄի եւ ԻԻՀի միջեւ:

Ներկայացնելով վերոնշեալ համաձայնագրով տնտեսական գործակցութեան պատկերը՝ անհարժեշտ է նաեւ քննարկել այն բազմակողմ օրակարգը եւ շահերը, որոնք կապել են վերոնշեալ երկրներին:

ԻԻՀի ներմուծման մաքսատուրքերի դրոյքաչափերի միջին մակարդակը արդիւնաբերական ապրանքների նկատմամբ նուազելու է 22,4%ից մինչեւ 15,4%, ԵԱՏՄին՝ 8%ից մինչեւ 4,7%: Գիւղատնտեսական ապրանքների նկատմամբ ԻԻՀն կը նուազեցնի տուրքերը միջինում 32,2%ից մինչեւ 13,2%, ԵԱՏՄն՝ 9,6%ից մինչեւ 4,6%:

Ակնյայտ է, որ ՀՀ տնտեսական զարգացման համար բազմակողմ արդի ձեւաչափը կարող է դառնալ գործակցութիւն ԻԻՀի հետ ԵԱՏՄ շրջանակներում:

Այդ ուղղութեամբ ՀՀի կողմից կատարւում են որոշ քննարկումներ. փոխվարչապետ Աւինեանը 2019 Յունուարի 17ին ընդունել է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) հայաստանեան ներկայացուցչութեան տնօրէն Շէյն Ռոզենթալի գլխաւորած պատուիրակութեանը: Ռոզենթալը յայտնել է, որ գործընկերութեան ռազմավարութեան մէջ շեշտադրում է լինելու <u>փոխադրային</u> ենթակառոյցների զարգացման ու կապակցելիութեան ոլորտների նիւթական աջակցութեան վրայ: Այդ ենթահողում զրուցակիցներն անդրադարձել են Հիւսիս-Հարաւ փոխադրային միջանցքի ընթացիկ աշխատանքներին, ծրագրի իրականացման ընթացքում կապալառուների հետ առաջացած խնդիրների առաւել արդիւնաւէտ լուծման ուղիներին եւ միջանցքի շինարարութեան յետագայ ընթացքին: Կողմերը քննարկել են նաեւ ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-ՌԴ ձեւաչափով փոխադրային գործակցութեան զարգացման հեռանկարները[64]:

Խնդրոյ առարկայ հարցերին է անդրադարձել նաեւ 2019 Յունուարի 22-25ը Դաւոսի Համաշխարհային Տնտեսական Համաժողովին մասնակցած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Ռուսական «ՐԵՀ» հեռուստաալիքին տուած հարցազրոյցում վարչապետը նշել է, որ քննարկւում են որոշակի գաղափարներ եւ նշել՝ «... *Մասնաւորապէս, կայ գաղափար՝ կապուած ԻԻՀ-ՀՀ սահմանին «Մարիոթ» հիւրանոց բացելու հետ: Քանի որ «Մարիոթ»ի քաղաքականութիւնն այնպիսին է, որ նրանք չեն կառուցում եւ չեն գնում անշարժ գոյք, այլ վարձակալում են տարածք, հետեւաբար այդ գաղափարը կեանքի կոչելու համար անհրաժեշտ է գտնել ներդրող, ով կը համաձայնի կառուցել շէնք, նախագիծը կը համաձայնեցնի «Մարիոթ»ի հետ, որին էլ յետագայում տարածքը կը տայ վարձակալութեան*»[65]:

Բազմակողմ կապերի զարգացմանն է միտուած 2019 Մայիսի 4ին Երեւանում բացուած «Եւրասիական Բրենդներ» խորագրով ցուցահանդէսը, որին մասնակցել են աւելի քան 65 ընկերութիւններ՝ ԻԻՀից եւ ԵԱՏՄ մի շարք երկրներից: Իրանական ընկերութիւնները ցուցահանդէսին ներկայացրել են տարբեր ոլորտների արտադրանք, այդ թւում՝ սնունդ, գորգեր, շինանիւթ, կենցաղային սարքաւորումներ,

ակցութիւմեքենաներ, աղանդեր: Երեւանում ԻԻՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Սէյէդ Քազէմ Սաջադին, որը ներկայ էր ցուցահանդէսի բացման, կարեւորելով տարբեր բնագաւառներում ԻԻՀ-ՀՀ

յարաբերութիւնները, նշել է. «*Հայաստանը կարող է իր ներքին շուկայի եւ ԵԱՏՄ շուկայի կարիքները բաւարարել Իրանի միջոցով*»[66]:

ԵԱՏՄ հետ կապերի խորացման շրջանակներում կարելի է դիտարկել նաեւ 2019 Փետրուարի 27ին ՀՀ վարչապետի այցը ԻԻՀ: ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի հետ ՀԼՄ ներկայացուցիչների համար համատեղ յայտարարութիւններով հանդէս գալը:

Ռոհանիի խօսքով՝ իրանական կողմը պատրաստակամ է գիւղատնտեսութեան ոլորտում գործակցել, զարգացնել սպանդանոցների գործունէութիւնը ՀՀում, խթանել անասնապահութեան ոլորտում գործնը[67]:

Քննարկումների միւս թեման վերաբերել է տեղեկատուական ճարտարագիտութեան ոլորտին: Բանակցութիւնների ընթացքում ԻԻՀ եւ ՀՀ միջեւ էլեկտրաուժանիւթի ոլորտում գործակցութեան տեսանկիւնից նաեւ կողմերը դիտարկել են գործակցութիւնը եռակողմ՝ Վրաստանի եւ քառակողմ՝ ՌԴի հետ, ձեւաչափերով: Ուշագրաւ է, որ գազի ոլորտում գործակցութեան ուղղութեամբ իրանական կողմը պատրաստակամութիւն է յայտնել՝ մատակարարումների ծաւալները աւելացնել, ինչպէս նաեւ եռակողմ գործակցութիւն ծաւալել՝ գազը արտահանելու դէպի Վրաստան:

Այսպիսով, երկկողմ քննարկումները յաջողուած կը լինեն, եթէ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները կեանքի կոչուեն:

2019 Հոկտեմբերի 27ին ուժի մէջ մտաւ ԵԱՏՄի եւ ԻԻՀի միջեւ ազատ առեւտրի գօտու ստեղծմանը միտուած Ժամանակաւոր Համաձայնագիրը[68]: Նոյն թուականի Օգոստոսի 28ին, ԵՏՀ նախագահ Տիգրան Սարգսեանի եւ ՌԴում ԻԻՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհդի Սանայիի միջեւ հանդիպման ընթացքում կայացել է յուշագիր փոխանակում՝ անհրաժեշտ ընթացակարգերն աւարտելու մասին:

2018ի արդիւնքներով ԻԻՀի արտահանողները արդէն իսկ աւելացրել են ԵԱՏՄի մատակարարումները աւելի քան 27%ով, իսկ ապրանքաշրջանառութիւնը ԵԱՏՄ երկրների միջեւ կազմել է աւելի քան 2,7 մլրդ. դոլար: Իր հերթին, 2019 Յունուար-Օգոստոս ամիսներին ԵԱՏՄից ԻԻՀ մատակարարումները աճել են աւելի քան 17%ով, իսկ ապրանքաշրջանառութիւնը գերազանցել է 2 մլրդ. դոլարը[69]:

Ուժի մէջ մտած առեւտրային համաձայնագիրը[70] նախատեսում է ապրանքների սահմանափակ ընդգրկում, սակայն ներառում է արտադրանքի առք ու վաճառքում գոյութիւն ունեցող գործնականում բոլոր հիմնական տեսակները, որոնց բաժին է ընկնում ԵԱՏՄի ամբողջ արտահանման 55%ը (առեւտրային վիճակագրութեան 2016-2018ի տուեալներ): Դրանք ապրանքների գիւղատնտեսական եւ արդիւնաբերական խմբերն են: Արտօնեալ ներմուծումը կազմում է ԻԻՀից ԵԱՏՄ մատակարարումների ընդհանուր ծաւալի 49%ը:

Ապրանքների ցանկում, որոնց համար ԵԱՏՄի արտահանողները կը ստանան արտօնութիւններ, ներառուել են մսային եւ իւղաճարպային

արտադրանքը, հրուշակեղէնի եւ շոկոլադի տեսակներ, ինչպէս նաեւ մետաղները, շպարի միջոցները, էլեկտրոնային եւ մեքենաշինական սարքաւորումների տեսակներ:

Իրանական կողմին սակագնային արտօնութիւններ կը տրամադրուեն պարէնի ընդարձակ ցուցակով, առաջին հերթին, բանջարեղէնի, մրգերի, չորացրած մրգերի, ինչպէս նաեւ շինարարական նիւթերի, սպասքի, գորգերի, գունաւոր մետաղներից պատրաստուած որոշ արտադրատեսակների համար:

Բացի այն բանից, որ համաձայնագիրը թոյլ է տալիս տնտեսել՝ մաքսատուրքեր չվճարելու շնորհիւ, փաստաթուղթը լրացուցիչ խթաններ է ստեղծում ԱՀԿի կանոնների վրայ հիմնուած՝ առեւտրի թափանցիկ եւ կանխատեսելի պայմանների ապահովման միջոցով առեւտրային փոխյարաբերութիւնների զարգացման համար: Ըստ համաձայնագրի՝ կողմերը կ'ապահովեն առաւել բարենպաստ ռեժիմ ԵԱՏՄի եւ ԻԻՀի միջեւ շրջանառուող բոլոր ապրանքների համար: Ապրանքների ներմուծման հետ կապուած վճարումները չպէտք է գերազանցեն տրամադրուած մաքսային ծառայութիւնների արժէքը եւ չպէտք է կիրառուեն անհիմն ոչ-սակագնային միջոցներ: Այդպիսի կարեւոր պահանջներից մէկն է ԱՀԿի իրաւունքի մէջ եւ ապահովում են երկրների միջեւ առեւտրի ռեժիմի կանխատեսելիութիւնը:

ԵԱՏՄ անդամ պետութիւնները եւ ԻԻՀն մեծ նշանակութիւն են յատկացնում փոխշահաւէտ գործակցութեան զարգացմանը: Դրա ապացոյցն է նախագահ Ռոհանիի մասնակցութիւնը 2019 Հոկտեմբերի 1ին Երեւանում կայացած ԵԱՏՄ Բարձրագոյն Խորհրդի նիստին:

ԵԱՏՄ Բարձրագոյն Խորհրդի նեղ կազմով նիստին մասնակցեցին ԵԱՏՄ երկրների ղեկավարները՝ վարչապետ Փաշինեանը, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկօն, Ղրղզստանի Հանրապետութեան նախագահ Սոորոնբայ Ժէէնբեկովը, Ղազախստանի Հանրապետութեան նախագահ Կասիմ Ժոմարտ-Տոկաեւը եւ Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի նախագահ Տիգրան Սարգսեանը:

Յատկանշական է, որ ընդլայնուած կազմով նիստին՝ հրաւիրեալ երկրի ղեկավարի կարգավիճակով մասնակցեցին նաեւ նախագահ Ռոհանին եւ Սինգապուրի Հանրապետութեան վարչապետ Լի Սիէն Լուն: ՀՀ ղեկավարութեան հետ հանդիպումների ընթացքում Ռոհանին կարեւորեց գործակցութիւնը ԵԱՏՄ շրջանակներում[71]:

Նշելի է, որ Երեւանում նախագահներ Պուտինը եւ Ռոհանին իրենց երկկողմ հանդիպմանը եւս կարեւորեցին գործակցութիւնը ԵԱՏՄ շրջանակներում[72]:

Այսպիսով, ստեղծուած միջազգային բարենպաստ պայմաններում, երբ առկայ է ռուս-իրանական շահերի համընկնում, կարեւոր է ՀՀ արտաքին

Վախթանգ Հաթերքցու եւ իր որդիների մահով Վերին Խաչէնի թագաւորական գահը դատարկ է մնացել: Թէեւ Վախթանգ Հաթերքցու եղբայրներից Սմբատը եւ Վասակը որդիներ ունէին, որոնք կարող էին ժառանգել հօրեղբօր գահը, բայց խաղաղ բանակցութիւնների արդիւնքում, Վերին Խաչէնի տարածքը փոքր մասով միացուել է Ծարի իշխանական տանը, իսկ մեծ մասով՝ Ներքին Խաչէնի թագաւորութեան:

Որքան է ամուսնու եւ որդիների մահուանից յետոյ ապրել Արզու Խաթունը՝ պատմական տեղեկութիւն չենք գտել: Որեւէ տեղեկութիւն չենք գտել նաեւ նրա դուստրերի յետագայ ճակատագրի մասին:

Խաղբակեանները

Խաղբակեան[118] տոհմի հիմնադիր, Ներքին Խաչէնի Հաւապտուկ բերդի տէր Խաղբակ Բ.ի որդի Վասակ իշխանը[119] 1201ին, հայոց բանակի կողմից Գեղարքունեաց տարածաշրջանի ազատագրումից յետոյ, երբ բացուել է Խաչէնի ճանապարհը, ազատագրական պայքարի մաս դառնալու նպատակով, թողել է հայրենի Հաւապտուկը, իր հեծեալ գնդով եկել է Լօռէ բերդ եւ ծառայութեան մտել հայոց բանակում:

Այս Վասակի եղբայր Ջաջուռ իշխանի դուստր Վանենին, որ ամուսնացել է Մահկանաբերդի Սեւորդեան տոհմից Կուկի որդի Աբասի հետ, 1232ին Նոր Գետիկի վանքում Ստեփանոս գրչին ձեռագիր, նկարազարդ Աւետարան է պատուիրել, որի յիշատակարանում գրել է, որ Վասակ իշխանի, իր հօր՝ Ջաջուռ իշխանի տոհմի նախնին Բակ իշխանն է, որ եղել է Վարդան Մամիկոնեանի զօրավարներից[120]:

Վասակ իշխանն աչքի է ընկել Բջնիի ազատագրման գործողութեան ժամանակ: Իւանէ Ա. Զաքարեանը ստանձնել է նրա հովանաւորութիւնը, նշանակել իր տան զօրաբանակի սպարապետ: Արցախից նոր զօրագնդերով եկել ու Վասակ սպարապետին են միացել որդիները Մկդէմը, Պապաքը, Հասան-Պռոշը, եղբայրները՝ Հասանը, Ջաջուռը, Գրիգորը, Աբուսէթը: Զաքարէ Բ. շահնշահի յանձնարարութեամբ Իւանէ Ա. զօրավարը բնակութեան համար Վասակի իշխանին ժառանգական իրաւունքով տուել է Բջնիի մօտ գտնուող Կեչառիս բնակավայրն իր վանական համալիրով:

Յաջորդ տարիներին Վասակ Խաղբակեանը հայոց զօրաբանակի գլուխ անցած Գեղարքունիքի կողմից, Վարդանեաց լեռնանցքով անցել է Սիւնիք: Կարճ ժամանակում ազատագրել Քարագլուխ գիւղը, Եղեգիս գիւղի մօտ գտնուող Սմբատաբերդը, Հերհերի ձորը, Ոստինք, Հերմոն, Ցաղաց Քար, Արատես գիւղերը, Բոլորաբերդ ամրոցը, Ջերմուկի ձորը, Քաշաթաղ-Ծարի լեռնանցքը, Գնդեվանքի ամրոցը, Սիսիանի լեռնանցքը, Վայք աւանը, Գոմք, Ուղեձոր, Մարտիրոս, Սերս, Ազնաբերդ, Արփի, Արենի, Ռինդ, Չիւա, Ելփին, Ամաղու, Խաչիկ գիւղերը, Ամաղուի մօտ գտնուող հզօրագոյն Հրաշքաբերդը:

Զաքարէ Բ. շահնշահը 1205ին ազատագրուած Հայք-Հայաստանում վարչական բարեփոխումներ կատարելով կողմնակալութիւն-կուսակալութիւն-փոխարքայութիւններ է ստեղծել: Ազատագրուած Վայոց Ձորի արեւելեան տարածքի վրայ ստեղծուած կողմնակալութեան կողմնակալ է նշանակել Վասակ իշխանին, նրան շնորհել իշխանաց իշխան բարձրագոյն կոչում, տոհմին տուել Խաղբակեան անուն:

Մինչեւ 1210, գործակցելով Լիպարիտ Օրբէլեանի հետ, որին Զաքարէ Բ.ն նշանակել էր Հրաշկաբերդի եւ շրջակայ բնակավայրերի վրայ ստեղծուած կողմնակալութեան կողմնակալ, ազատագրել են ամբողջ Նախիջեւանը, որ հիմնականում անցել է Վասակին եւ արեւելեան Սիւնիքը՝ Սիսական-Գորայք[121] հատուածը, որն անցել է Լիպարիտին: Բարկուշատ-Արաքս գետ-Խուդափերինի կամուրջ հատուածը տրուել է Վասակ Խաղբակեանին:

Ռազմական եռանդուն գործողութիւններին յաջորդած կարճատեւ խաղաղ տարիներից մէկում՝ 1204ին, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը կնոջ՝ Մամայի գործակցութեամբ կատարել է Կեչառիսի Կաթողիկէ եկեղեցու հիմնարկէքը: Պատերազմական գործողութիւններին մասնակցող ամուսնու փոխարէն շինարարութեան ընթացքը ղեկավարել է Մամա իշխանուհին: Եկեղեցու շինարարութիւնն աւարտուել է 1214ին: Կաթողիկէ եկեղեցին Կեչառիսի համալիրի մարգարիտն է, գտնուում է Սուրբ Նշան եկեղեցու հարաւային կողմում: Այն արտաքուստ քառակուսի յատակագծով կենտրոնագմբէթ շէնք է: Ներքուստ, չորս անկիւններում տեղադրուած երկյարկ աւանդատների շնորհիւ խաչաձեւ տեսք ունի: Արեւելեան կողմում բարձր բեմով խորանն է: Չորս կենտրոնական սիւների եւ կիսասիւների առաջացրած լուսանցքի վրայ բարձրանում է կլոր գմբէթը սրածայր վեղարով: Կաթողիկէի արեւմտեան շքամուտքի ճակատաքարի եւ կամարի քարի վրայ փորագրուած է. «*Ես՝ Վասակ, որդի Խաղբակա, շինեցի զսուրբ Կաթողիկէս յաւգնականութիւն եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբակի, եւ արեան հարազատի իւրոյ Շահնշահի, եւ Աւագին, եւ մատն պատրոն Խոշաքին, եւ եղբայրացն, եւ որդեացն, յարեւշատութիւն ինձ, եւ ամուսնոյ իմոյ Մամային՝ մեղաց թողութիւն*»[122]:

Կաթողիկէի հարաւային արտաքին պատին Վասակ Խաղբակեանի մեծ արձանագրութեան տակ իր վիմագիրն է թողել նաեւ Մամա իշխանուհին. «*Ես՝ Մամայս, աղախին Քրիստոսի, դուստր ... Վասակա, զայգին իմ, որ յերեւան գնեցի ի հալալ ընչից իմոյ եւ յեպու /ի սուրբ եկ/եղեցիս, որ շաբաթ աւրն :Բ:/2/ խորանն լինի իւթիցն պատարագ կամակցութեամբ տեառն իմոյ Վասակա*»[123]:

Այս արձանագրութիւնը միակն է, որտեղ յայտնուել է Մամա իշխանուհու հօր անունը՝ Վասակ, բայց քանի որ այդ անուանը նախորդող տողի

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Р. Мамедова, "Формирование Международно-Прававой Статус Каспийского Моря в Постсоветский Период" (Ռ. Մամեդովա, Կասպից ծովի միջազգային իրաւական կարգավիճակի ձեւաւորումը յետխորհրդային ժամանակաշրջանում), *Центральная Азия и Кавказ* (Կենտրոնական Ասիա եւ Կովկաս, ընկերաքաղաքական հետազօտութիւնների գիտական հանդէս), Շուեդիա, 2001:2(14), էջ 84:

[2] H. Amirahmadi, *The Caspian Region at A Crossroad: Challenges of A New Frontier of Energy and Development*, St. Martin's Press, New York, 2000, էջ 138:

[3] А. Малеки, "Иран и Туран: К Вопросу об Отношениях Ирана с Государствами Центральной Азии и Закавказья" (Ա. Մալէքի, Իրան եւ Թուրան. Կենտրոնական Ասիայի եւ Անդրկովկասի հանրապետութիւնների հետ Իրանի յարաբերութիւնների հարցի շուրջ), *Центральная Азия и Кавказ*, Շուեդիա, 2001:5, էջ 113:

[4] ՀՀ ԱԳՆ Պատմադիւանագիտական արխիւ (ՊԴԱ), ց. 1, գ. 285, թ. 152:

[5] Նոյն, ց. 5, գ. 242, թ. 84:

[6] ՀԱԱ, Ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 105-109:

[7] ՊԴԱ, ց. 5, գ. 242, թթ. 106-109:

[8] 1997 Դեկտեմբերին Թեհրանում ԱԳ նախարարները ստորագրում են եռակողմ գործակցութեան փոխըմբռնման յուշագիր: 1999 Յուլիսի 12ին Աթէնքում, իսկ 1999 Սեպտեմբերին Երեւանում տեղի են ունենում ԱԳ նախարարների հանդիպումները: Ուշագրաւ է, որ երեւանեան հանդիպմանը Յունաստանի ԱԳ նախարար Գէորգիոս Պապանդրէուն այն հարցին, թէ հնարաւոր համարու՞մ է գործակցութեան վերածումը ռազմական դաշինքի, պատասխանում է, որ գործակցութեան նպատակների մէջ ռազմական ոլորտը չի ներգրաւում: Խնդիրն այն էր, որ Յունաստանի՝ ՆԱՏՕի անդամ պետութիւն լինելու փաստը որոշակի խոչընդոտ էր ՀՀ-ԻԻՀ հետ գործակցութեանը:
2000ին Թեհրանում տեղի ունեցաւ ԱԳ փոխնախարարների եռակողմ գործակցութեան հերթական նիստը, որին մասնակցեց ՀՀ ԱԳ փոխնախարար Արմէն Մարտիրոսեանը: Սակայն դրանով հանդերձ շարունակւում էին քննարկումները: 2001 Մարտի 8ին Աթէնքում հանդիպեցին ԱԳ նախարարները: Օսկանեանը, Խառազին եւ Պապանդրէուն քննարկեցին երեք երկրների միջեւ տնտեսական յարաբերութիւնների խորացման հարցեր: Կարելի է ասել, այդ հանդիպումների արդիւնք իբրեւ՝ 2001 Հոկտեմբերի 26ին Երեւանում բացուեց ՀՀ-ԻԻՀ-Յունաստան արդիւնաբերական արտադրանքի համատեղ ցուցահանդէս: Արժէ նշել, որ մասնակից կողմերը մեծ ցանկութիւն ունէին գործնական արդիւնքներ գրանցելուն, սակայն ֆինանսական կամ քաղաքական, ինչպէս նաեւ աշխարհագրական բաժանուածութեան պատճառներով չկարողացան լիարժէք գործակցել:

[9] Խմբագրական, «Եռակողմ Տնտեսական Յարաբերութիւնների Խորացումը Որպէս Շրջանի Անվտանգութեան Երաշխիք», *Ազգ Օրաթերթ*, 20 Մարտի 1997:

[10] Վ. Բայբուրդեան, *Իրանն Այսօր (Տեղեկագրու)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1999, էջ 325:

[11] Խմբագրական, «Քառակողմ Հանդիպում Թեհրանում», *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 5 Դեկտեմբերի 1996:

[12] Խմբագրական, «Եռակողմ Համագործակցութեան Ուղիների Քննարկում Աթենքում», *Ազգ Օրաթերթ*, Թեհրան, 23 Դեկտեմբերի 1997:

[13] Խմբագրական, «Էներգետիկ Հարցերով Փորձագէտների Հանդիպում Երեւանում», *Ազգ Օրաթերթ*, 5 Յունիսի 1998:

[14] Վ. Բայբուրդեան, *Իրանի Պատմութիւն*, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2005, էջ 742:

[15] Բայբուրդեան, *Իրանի*, էջ 742:

[16] Խմբագրական, «ԻԻՀ-ՀՀ-Յունաստան Երկրորդ Եռակողմ Հանդիպում», *Ազգ Օրաթերթ*, 9 Սեպտեմբերի 1998:

[17] Խմբագրական, «Փոխըմբռնման Յուշագրի Ստորագրում», *Ազգ Օրաթերթ*, 10 Սեպտեմբերի 1998:

[18] Խմբագրական, «Հայաստանի, Իրանի Եւ Յունաստանի Առեւտրի Պաշտօնեաների Հանդիպումը Երեւանում», *Ազգ Օրաթերթ*, Թեհրան, 11 Յունիսի 2000:

[19] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 242, թ. 265:

[20] «ԱրմԻնֆօ» անկախ լրատուական գործակալութիւնը ստեղծուել է 1991ին: Նախապէս կոչուել է «Սնարք», ապա՝ «Դեֆակտօ»:

[21] Խմբագրական, «Պաշտօնական Աթենքը Եւ Թեհրանը Հրապարակել են Հայ-Յունա-Իրանական Ռազմական Պակտի Ստորագրման Օրը», *Ազգ Օրաթերթ*, 3 Յուլիսի 1999:

[22] ՎՈՒԱՄը տարածաշրջանային կազմակերպութիւն է, որը ստեղծուել է 1997ին (կազմակերպութեան ուխտը ստորագրուել է 2001ին, կանոնադրութիւնը՝ 2006ին): Անդամ երկրներն են՝ Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան եւ Մոլդովա (1999-2005՝ կազմակերպութեան անդամ էր նաեւ Ուզբէկստանը): ՎՈՒԱՄի անունը ձեւաւորուել է ընդգրկուած երկրների անունների առաջին տառերից: Նախքան Ուզբէկստանի դուրս գալը կազմակերպութիւնը կոչւում էր ՎՈՒՈՒԱՄ:

[23] Խմբագրական, «Իրանի Եւ Հայաստանի Հետ Ռազմական Պակտ Ստորագրելու Յունաստանի Մտադրութեան Մասին Հաղորդումները "Սխալ" Էին», *Ազգ Օրաթերթ*, 7 Յուլիսի 1999:

[24] Բայբուրդեան, *Իրանի*, էջ 735:

[25] Ռաֆսանջանիի այցը պէտք է դիտարկել ոչ միայն երկկողմ, այլեւ տնտեսական բազմակողմ յարաբերութիւնների ենթախորքում: Վրաստանի միջոցով լուծում էր Թեհրանի համար մեծ նշանակութիւն ունեցող Իրան-Եւրոպա այլընտրանքային կապը: Յայտնի է, որ ԻԻՀն իր բեռների մեծ մասը Եւրոպա տեղափոխում էր Թուրքիայի տարածքով. Վրաստանի տարածքից օգտուելու դէպքում կը նուազէր Թեհրանի կախուածութիւնը Անկարայից: Ահա թէ ինչու ԻԻՀն շահագրգռուած էր ԻԻՀ-ՀՀ-Վրաստան եռակողմ տնտեսական գործակցութեամբ:

[26] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 242, թթ. 121-122:

[27] Նոյն, թ. 145:

[28] Նոյն, թթ. 162-164:

[29] Նոյն, g.1, գ. 286, թթ. 145-146:

[30] Նոյն, g. 5, գ. 242, թթ. 196-200:

[31] Նոյն, g.1 , գ. 286, թթ. 183-185:

[32] Նոյն, g. 2, գ. 167, թ. 23:

[33] Վ. Բայբուրդեան, «ՀՀ Տեղը եւ Դերը ԻԻՀ Տարածաշրջանային Քաղաքականութեան Ոլորտում», *Հայագիտութեան Արդի Վիճակը եւ Զարգացման Հեռանկարները, Միջազգային Համաժողով, Զեկուցումների ժողովածու*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2004 էջ 146:

[34] Խմբագրական, «ՀՀ Գլխաւոր Գործընկերները Արտաքին Առեւտրի Բնագաւառում», *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 6 Յունուարի 1995:

[35] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 285, թ. 148:

[36] Բանդար Աբբաս նաւահանգիստը ԻԻՀի Պարսից Ծոցի հարաւային ափի Հորմոզգան նահանգի կենտրոնն է ու ամենամեծ քաղաքը: Այն ռազմավարական դիրք ունի Հորմուզի Նեղուցում եւ իրանական նաւատորմի գլխաւոր յենակէտն է:

[37] Խմբագրական, «ՀՀ Պաշտօնական Պատուիրակութիւնը Մեկնեց Թեհրան», *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 17 Մարտի 1995:

[38] Գ. Բադալեան, *Հայաստան-Իրան. Յարաբերութիւնները 20 Տարեկան են*, Թեհրան, «Ալիք» Հրատ., 2012, էջ 66:

[39] 1995 Ապրիլի 8ին Թեհրանում տեղի ունեցաւ առաջին խորհրդակցութիւնը, որտեղ քննարկում է թուրքմէնական գազը ԻԻՀ տարածքով ՀՀ առաքելու նախագիծը: 1995 Յուլիսի 27ին Աշխաբադում հանդիպեցին ՀՀ, ԻԻՀ եւ Թուրքմէնստանի ԱԳ նախարարներ Վահան Փափազեանը, Վելայաթին եւ Բ. Շէյխմուրադովը, իսկ Սեպտեմբերի 18ին Վելայաթին այցելեց Երեւան:

[40] Խմբագրական, «Հայաստան-Իրան-Թուրքմէնստան Եռակողմ Բանակցութիւններ», *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 3 Յունիսի 1995:

[41] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 286, թթ. 42-45:

[42] Մաշհադ-Սարախս-Թաջան երկաթուղին ԻԻՀն կապեց կենտրոնասիական եւ անդրսիբիրեան երկաթգծին: Այն ունի 295 կմ երկարութիւն, որից 130ը՝ Թուրքմէնստանի, 165ը՝ ԻԻՀի տարածքում: Կառոյցն արժեց 800 մլն. դոլար:

[43] Խմբագրական, «Աշխաբադում Ստորագրուել է Եռակողմ Ապրանքափոխանակութեան Յուշագիր», *Ալիք Օրաթերթ*, Թեհրան, 6 Յուլիսի 1996:

[44] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 239, թթ. 1-4:

[45] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 239, թ. 3:

[46] http://www.irtek.am/views/act.aspx?aid=25225 դիտուել է 01.02.2020ին:

[47] http://ysu.am/files/karavarum.pdf դիտուել է 01.02.2020ին:

[48] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 239, թ. 100:

[49] Ռ. Յովհաննիսեան, *Արտաքին Քաղաքականութիւնը եւ Մամուլը, Ռա. Զեռնարկ*, Ռուս-Հայկական (Սլաւոնական) Պետ. Համալս. Հրատ., Երեւան, 2004, էջ 60:

[50] Г. Демоян, Турция и Карабахский Конфликт в Конце XX-Начала XXI Веков (Հ. Դեմոյեան, Թուրքիան եւ ղարաբաղեան հակամարտութիւնը Ի. դարի վերջ-ԻԱ. դարի սկզբին), Центр Европ. и Арм. Исследований "ПРОСПЕКТУС"

(«Պրոսպեկտուս» Եւրոպական եւ հայագիտական հետազօտութիւնների կենտրոն), Երեւան, 2006, էջ 133:

[51] ՌԴում ԻԻՀ դեսպանութիւնը երկու տարի շարունակ նախապատրաստում էր Մ. Շայմիեւի այցը ԻԻՀ: ԻԻՀ դեսպան Մ. Սաֆարին միքանի անգամ հանդիպել էր Շայմիեւի հետ Մոսկուայում եւ Կազանում: Թաթարստանի հանդէպ ԻԻՀի ուշադրութիւնը հասկանալի է՝ չնայած Թաթարստանի բնակչութեան գրեթէ կէսը ռուսներ են, հանրապետութիւնը պաշտօնապէս իսլամ է դաւանում: Կողմերը բանակցում են մշակոյթի, տնտեսութեան եւ կրթութեան ոլորտներում գործակցութիւն հաստատելու ուղղութեամբ:

[52] Ազգութեամբ թաթար պետական ու քաղաքական գործիչ Մինտիմէր Շայմիեւը ՌԴի կազմում գտնուող Թաթարստանի Հանրապետութեան առաջին նախագահն է եղել: Դարձել է նախագահ 1991 Յունիսի 12ին, վերընտրուել 1996 Մարտի 24ին, 2001 Մարտի 25ին, 2005 Մարտի 25ին: Շայմիեւը 2010 Յունուարին յայտնել է ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւին, որ չի ցանկանում կրկին նշանակուել Թաթարստանի նախագահի պաշտօնում: Նրան յաջորդել է Ռուստամ Միննիխանովը:

[53] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 242, թ. 255:

[54] Խմբագրական, «Ո՞ւմ է Վախեցնում Մոսկուա-Թեհրան-Երեւան Եռանկիւնին», *Ազգ Օրաթերթ*, 4 Յունիսի 1999:

[55] Խմբագրական, «Ի Հակակշիռ Ադրբեջան-Իսրայէլ-Թուրքիա Դաշինքի», *Ազգ Օրաթերթ*, 11 Նոյեմբերի 1998:

[56] Санаи Мехди, *Отношения Ирана с Центральноазиатскими Странами СНГ* (Սանայի Մեհդի, Իրանի յարաբերութիւնները ԱՊՀ կենտրոնասիական երկրների հետ), Մոսկուա, «Մուրավիէյ» Հրատ., 2002, էջ 43:

[57] http://www.eaeunion.org/?lang=en#about դիտուել է 02.02.2020ին:

[58] ԵԱՏՄ անդամ պետութիւններն են՝ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի հանրապետութիւնները եւ Ռուսաստանի Դաշնութիւնը:

[59] https://www.mfa.am/hy/bilateral-relations/ir դիտուել է 23.01.2020ին:

[60] Փոխանակում (անգլ. Swap) - ֆինանսական եւ առեւտրային փոխանակման գործարք՝ տարբեր գործարքների փոխանակման ձեւով, որի դէպքում արժէթղթերի ձեռքբերման (վաճառքի) գործարքի կնքումը, արժոյթը ուղեկցւում է հաշուարկային գործարքի կնքմամբ, այդ արտադրանքի հակադարձ վաճառքի (գնման) գործարք կնքելու համար որոշակի ժամանակահատուածից յետոյ այդ ապրանքների համար նոյն կամ այլ պայմաններ: Ընդհանուր առմամբ, այն ներառում է վճարումների բազմամեայ փոխանակում: Փոխանակումն օգտագործւում է հաշուեհամարների եւ պարտաւորութիւնների չափը մեծացնելու համար: Արժէթղթերով ապահովուած ֆինանսաւորում կամ, հակառակը, վարկային արժէթղթեր ֆինանսաւորելու՝ առաքման համար պարտաւորութիւնները կատարելու համար, ռիսկերի բնոյթի կրճատում կամ փոփոխութիւն:

[61] Ծովային, օդային, երկաթգծային եւ բեռնատար մեքենայով փոխադրումների համակցումը հնարաւորութիւն է տալիս կրճատել փոխադրման ժամկէտը եւ առաւելագոյնին հասցնել փոխադրման արդիւնաւէտութիւնը՝ ապահովելով ծախսի զգալի նուազում:

[62] Համաձայնագրում իրենց ստորագրութիւններն են դրել ԵՏՀ նախագահ Սարգսեանը, փոխվարչապետ Աւինեանը, Բելառուսի վարչապետի առաջին տեղակալ Վասիլի Մատիուշեւսկին, Ղազախստանի վարչապետի առաջին տեղակալ Ասկար Մամինը, Ղրղզստանի փոխվարչապետ Զամիրբէկ Ասկարովը, ՌԴ կառավարութեան նախագահի տեղակալ Դմիտրի Կոզակը եւ ԻԻՀ արդիւնաբերութեան, հանքերի եւ առեւտրի նախարար Մոհամմադ Շարիաթմադարին:

[63] http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/17-05-2018-1.aspx դիտուել է 29.01.2020ին:

[64] «Փոխվարչապետ Աւինեանն ԱԶԲի Պատուիրակութեան Հետ Քննարկել է Իրան-ՀՀ-Վրաստան-ՌԴ Տրանսպորտային Համագործակցութեան Զարգացման Հեռանկարները», https://armenpress.am/arm/news/961187.html դիտուել է 01.02.2020ին:

[65] «Քննարկւում է Իրան-Հայաստան Սահմանին «Մարիոթ» Հիւրանոց Բացելու Գաղափարը», https://168.am/2019/01/29/1074303.html դիտուել է 01.02.2020ին:

[66] «Երեւանում Բացուել է Իրանական Ապրանքների Ցուցահանդէս», http://parstoday.com/hy/news/armenia-i107018?fbclid=IwAR3iZejFSPwtKVqmPzVoONPBJy69bUII4OJrwKum7QKIYhm9Drmvj7bQgjQ , դիտուել է 01.02.2020ին:

[67] «Նիկոլ Փաշինեանը եւ Հասան Ռոհանին ԶԼՄ Ներկայացուցիչների Համար Հանդէս են Եկել Յայտարարութիւններով. Ստորագրուել են Փաստաթղթեր», http://www.primeminister.am/hy/press-release/item/2019/02/27/Nikol-Pashinyan-Hassan-Rouhani-Joint-Statement/ դիտուել է 03.02.2020ին:

[68] http://www.eurasiancommission.org/en/nae/news/Pages/28-10-2019-1.aspx դիտուել է 30.01.2020ին:

[69] http://www.eurasiancommission.org/en/nae/news/Pages/28-10-2019-1.aspx դիտուել է 30.01.2020ին:

[70] http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/sogl_torg/Documents/Interim%20Agreement%20EAEU-Iran_final.pdf դիտուել է 27.01.2020ին:

[71] http://www.president.ir/en/111608 , http://www.president.ir/en/111627 , http://www.president.ir/en/111640 , դիտուել են 27.01.2020ին:

[72] https://ria.ru/20191001/1559309690.html դիտուել են 27.01.2020ին:

THE MULTILATERAL ECONOMIC COOPERATION BETWEEN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN AND THE REPUBLIC OF ARMENIA

(Summary)

KAREN MKRTCHYAN
K86Mkrtchyan@gmail.com

Between the mid-1990s and 2005 the Foreign Ministry of the Islamic Republic of Iran (IRI) developed a multilateral economic cooperation plan to enhance and enlarge foreign economic relations with both contiguous countries and regional economic organizations.

Based on archival documents, press and other publications, this study discusses the details of the implementation of this project and the development of economic relations between the Republic of Armenia (RA) and the IRI in the context of multilateral cooperation in the region.

The relevance of the research is conditioned by the growing and deepening economic relations between the RA and the IRI, alongside other issues, which are of economic and strategic importance for the two neighboring countries.

The formation of multilateral economic cooperation initiated by the IRI was aimed at fostering cooperation between neighboring states, and developing friendly and neighborly relations in the region. It would geographically and economically link the countries of the Black Sea and the Persian Gulf basin to each other and eventually to Europe and Southwest Asia.

The article discusses the series of meetings and negotiations, which the IRI initiated as of the mid-1990s to realize this broad project, as a part of its regional policy. It analyzes the positions of stakeholders and the response of the regional states, like Greece, Bulgaria, Georgia, Azerbaijan, Russia, Uzbekistan ...as well as the formation of RA-IRI-Greece trilateral and RA-IRI-Georgia-Bulgaria quadrilateral cooperation. However, only some of these meetings were fruitful and two sets of multilateral relations, namely RA-IRI-Russia and RA-IRI-Turkmenistan materialized.

The study assesses why the RA positively reacted to the Iranian initiative unlike Georgia and Azerbaijan.